№ 247 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31

1905

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31 № 247

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ԱՌԱՋԻԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Դեկտեմբերի 29-ին վախճանվեց երդուեալ հաւատարմատար

ԱՐՍԷՆ ՂՈՒԿԱՍԵԱՆ ՇԻԽԵԱՆՑ

որի մասին վշտաբեկ Ղուկաս Յովհանջանեան, Աննա Աստուածատուրեան, Մարիամ Միքայէլեան, Աշոտ և Մարիամ Ղուկասեան Շիխեանց և Շուշանիկ Ղուկասեան, Նիկալայ Ալէքսանդրեան Ջոհրաբեանց յայտնում են ազգականներին և ծանօթներին։

Յուղարկաւորութիւնը այսօր, շաբաթ, դեկտեմբերի 31-ին, առաւօտեան 10½ ժամին, բնակարանից (Բաւիչևսկի փողոց № 22 տ. Դաւիդովի) Մողնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Վերայի գերեզմանատանը։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան կողմից. Ռէակցիայի վտանգի առաջ. Վերջին տեղեկութիւններ. Թիֆլիսի դէպքերը. Փոխարքայի հեռագիրը Թագաւոր կայսրին. Թիֆլիսում գեներալ-նահանգապետներ նշանակելը Մտքեր և փաստեր. Զանգուի նոր դէպքերը. Դրութիւնը Շուշում. Դէպքերը Գանձակի գաւառում. Զանգեզուրի կեանքից. Նամակ Կարսից. Չը մոռանանք. Նամակներ Խմբագրութեան. Թատրօն և երաժշտութիւն. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Մշակի» հրատարակութիւնը ընդհատվեց գործադուլի պատճառով։ Եւ միայն այսօր նորից մենք հնարաւորութիւն ունինք խօսել մեր ընթերցողների հետ։

Գործադուլը կարեց մամուլի ձայնը մի այնպիսի ժամանակ, երբ ամենից շատ կարևոր և հարկաւոր էր հասարակական մտածողութեան ամենաընդարձակ արտայայտութիւնը։

Մամուլի վերաբերութեամբ գործադուլը բոլորովին անտեղի մի բան էր։ Բայց նա տեղի ունեցաւ, որովհետև բանւորական խմբերը սխալ տեսակէտ էին իւրացրել, ուշադրութեան չառնելով մամուլի յատուկ դերը ու նշանակութիւնը։

Թէև մեր բաժանորդները մնացին առանց լրագրի ընդհանուր պատճառով, այնուամենայնիւ մենք որոշեցինք մասամբ լրացում տալու նրանց՝ ուղարկելով յունվարի առաջին կէսի համարները։

Այնուհետև լրագրի առաքումը կընդհատվի մինչև բաժանորդագրութեան վերանորոգումը։

ՌԷԱԿՑԻԱՅԻ ՎՏԱՆԳԻ ԱՌԱՋ

Նորից գործադուլի մէջ էինք և այն էլ մի սրտամաշ մեծ գործադուլի մէջ։

Կանգ էին առել երկաթուղիները պետութեան բոլոր մասերում։ Ոչ մարդկանց երթևեկութիւն և ոչ ապրանքների փոխադրութիւն այլ ևս չը կար երկաթուղիների միջոցով։ Իսկ պօստ-հեռագրական գործադուլի շնորհիւ կտրված էր հեռագրական հաղորդագրութիւնը։

Այդպիսով մենք ոչ մի յարաբերութիւն չունէինք դրսի աշխարհի հետ և ստիպված էինք մի կղզիացած կեանք վարել տնտեսական ճգնաժամի պայմաններում և հասարակական յուզված տրամադրութեան մէջ։ Գործադուլը դեռ չէ վերջացել ամեն տեղ, նոյն իսկ ներկայումս։

Ի՞նչ կը լինի գործադուլի վերջնական արդիւնքը՝ ոչ ոքին յայտնի չէ։ Բայց ինչ էլ լինի այդ արդիւնքը, նա ճակատագրական նշանակութիւն պէտք է ունենայ։

Այստեղ բնականաբար մի հարց է հանդէս գալիս մեր առաջ։ Միթէ կարող է յետադարձ շարժում կամ ռէակցիա առաջ գալ։ Միթէ կառավարութեան գլուխ անցած պետական գործիչները յետ կը վերցնեն խոստացած ազատութիւնները և կը վերադարձնեն մեզ Պլեվէի մինիստրութեան օրերին։

Առողջ դատողութիւնն ասում է, որ դա անկարելութիւն է, որովհետև պետական գործիչները իրանք էլ պէտք է համոզված լինեն, որ այժմեան Ռուսաստանը այլ ևս հին Ռուսաստանը չէ և հոկտեմբերի 17-ի Մանիֆեստը արտայայտել է ժողովրդական պահանջների նուազագոյն չափը, առանց որի այլ ևս անհնարին է վարել Ռուսաստանի պետական գործերը։ Եւ այժմ հարց կարող է լինել միայն և միայն ռեֆորմների ընդարձակման, այլ ոչ թէ նրանց սղման և կրճատման մասին։

Բայց չը պէտք է մոռանալ, որ հին կարգերի պաշտպանները ձեռքերը ծալած չեն նստել և նրանք, անկասկած, կաշխատեն վախեցնել կառավարչական գործողներին յեղափոխական կուսակցութիւնների ծայրայեղ պահանջներով, ամեն ջանք գործ կը դնեն համոզելու, որ ազատ կարգերը կը դառնան խաղալիք անիշխանականների ձեռքին և կը տանեն պետութիւնը դէպի վերջնական կործանում։ Եւ կարո՞ղ ենք արդեօք հաւատալ որ հանդէս կը գայ պետական այն առողջ մտածողութեան ոգին, որը չը պէտք է տատանվի և երերվի սև գուշակութիւններից և ագռաւային կռկռոցներից, համարձակ կերպով պէտք է պատռի հին և նորի մէջ եղած անջրպետը և առաջ նետվի, իր համար ապաւէն հրաւիրելով ազատ ժողովրդական կեանքի փրկարար ոյժը և նրա մեծ ստեղծագործական ընդունակութիւնը։

Մենք սարսափով և սրտի խոր կսկիծով տեսնում ենք, ինչպէս կառավարչական ղեկավար անձերը իրանց դանդաղկոտութեամբ և անվճռականութեամբ նպաստում են սոսկալի վիհեր կազմվելուն ներկայ անցողական շրջանի մէջ։ Այն, ինչ որ կարող էր հասարակութեան մտքերը խաղաղացնել մի կէս տարի սրանից առաջ, այժմ այլ ևս չէ գոհացնում մարդկանց և տարաձայնութիւնը կառավարութեան ու գործող համախմբումների մէջ աւելի ու աւելի սուր բնաւորութիւն է ստանում։

Այստեղ կարող է մի այսպիսի հարց առաջ գալ։ Եթէ կառավարչական գործողների դանդաղկոտութիւնը, կամակորութիւնը և անվճռականութիւնը այն արդիւնքն է առաջացնում, որ ռեֆորմներ պահանջողները սկսում են աւելի մեծ և սուր պահանջներ անել, ուստի գուցէ աւելի լաւ է որ կառավարութեան յամառութիւնը աւելի ևս շարունակվի և վերջ ի վերջոյ լուծվի աւելի լայն և ընդարձակ ռեֆորմներով, քան մենք ունենք այժմ իբրև խոստումներ հրատարակված Մանիֆեստներում։

Այո, կարելի էր և այդպէս մտածել և կան էլ այդ տեսակ մտածողներ, բայց չը պէտք է մոռանալ, որ մենք այդ դէպքում գործ ունենք միայն ենթադրութիւնների հետ և կարող է պատահել, որ մենք մի անորոշ ու վտանգաւոր խաղի բռնված կը լինենք, որից սարսափելի վնասներ կը ստանանք։ Փոխադարձ մաքառումների և դիմադրութիւնների չափազանց լարված վիճակը առաջ է բերել այնպիսի սարսափելի ընդհարումներ, որոնք արեան գետեր հոսեցրին մեր առաջ, ով գիտէ, գուցէ հին ռէժիմը կարողանայ նոյն իսկ ժամանակաւոր յաղթութիւն տանել, հանդէս բերելով բռնակալ-դիկտատորների, որոնք կը սղմեն իրանց բռան մէջ խոստացված ազատութիւնները և մի քանի տարիներով կը յետաձգեն նրանց գործադրութիւնը կեանքի մէջ։

Առանձին մարդիկ կամ նոյն իսկ խմբեր ընդունակ են հերոսութիւններ անելու և նահատակներ ու մարտիրոսներ լինելու։

Նրանց չէ ընկճում կռուի մեծութիւնը, այլ շատ անգամ ընդհակառակը աւելի ոգևորում է և անսովոր ոյժ ներշնչում։ Բայց ժողովրդի ընդհանրութիւնը ամեն անգամ հաւատարիմ չէ մնում իր տրամադրութեան և նա կարող է վաղը գնալ մի դիկտատորի ետևից, որի մէջ կը տեսնէ իր ժամանակաւոր հերոսին, իր փրկողին։

Ահա այդ հանգամանքը չը պէտք է աչքաթող անել։ Չը պէտք է թոյլ տալ, որ հասարակութիւնը, զգալով իրան տանջված և յոգնած անցողական շրջանի չափազանց մեծ զրկանքներից և արիւնահեղ արտայայտութիւններից, գցէ իրան ռէակցիայի գիրկը հանգստութիւն և անդորրութիւն որոնելու իր սրտին խորդ և օտար բազուկներում։ Այդ պատճառով պէտք է ջանք գործ դնել, որ սխալներ կարելին չափ քիչ տեղի ունենան և ռէակցիայի ձեռքը տրված չը լինեն այնպիսի զօրաւոր առիթներ, որոնք ռէակցիայի համար հիմք ծառայեն իր գլուխը բարձրացնելու, ժողովրդականութիւն շահելու և մարդիկ դէպի ինքը գրաւելու։

Այդ տեսակէտով, օրինակ, մենք անտակտութիւն և սխալ ենք համարել Թիֆլիս քաղաքում «զինված ապստամբութիւն» առաջացնելը։ Նախ այդպիսի մի ապստամբութեան գաղափարը թիւր կերպով է մինչև այժմ հասկացվել ռուս մարդկանց կողմից և յոյս էլ չը կայ, որ հասկացվի իր իսկական իմաստով, ընդհանուր շահերի տեսակէտով. իսկ երկրորդ, նա իրապէս չէ կարող աջողութիւն ունենալ, որովհետև զօրքը չի անցնի Թիֆլիսի ամբոխի կողմը և ամենակատաղի դիմադրութիւն ցոյց կը տայ մի այդպիսի փորձի։ Մենք այլ ևս չենք խօսում այն բանի մասին, որ խաւար ոյժերի, խուլիգանների և բարբարոսական հրոսակների համար բացված կը լինի մի ընդարձակ ասպարէզ աւերելու, հրդեհելու և կողոպտելու երկար տարիների ընթացքում կառուցած շինութիւնները և դիզած հարստութիւնները։ Մենք կարող էինք հաշտվել այդ զոհերի հետ, եթէ գիտենայինք, որ նրանք անհրաժեշտ տուրքեր են [illegible] հետևանքներ ստանալու համար։ Բայց արդիւնքը այն կը լինի, որ զոհերը արված կը լինեն, իսկ նպատակը բոլորովին չիրականացած և նոյն իսկ բարոյապէս չը գնահատված։

Մենք լաւ գիտենք որ մեր երկրի հարցերը աւելի բարդ են, քան Ռուսաստանի ուրիշ մասերի։ Այստեղ բացի ընդհանուր ազատագրական խնդիրներից, մենք գործ ունենք ծայրերկրի յատուկ պայմանների հետ և գտնվում ենք մի երկրում, ուր միասին ապրում են բազմաթիւ ազգագրական տարրեր իրանց տարբեր պատմական անցեալով և հասարակական ձգտումներով։ Բայց երկրի դրութեան լուրջ և բարդ լինելը պարտք է դնում մեզ վրա աւելի խոր ուսումնասիրել մեր պայմանները և այնպէս ծրագրել մեր գործունէութիւնը, որ մենք նոր թիւրիմացութիւններ ստեղծելով, չարաբախտ առիթներ տուած չը լինենք ռէակցիայի ձեռքը նոր թշուառութիւններ բերելու մեր երկրի և նրա մէջ ապրող ազգերի համար։

Ռէակցիայի դաւերի համար մեր երկիրը շատ արգաւանդ հող է ներկայացնում և մեր երկրի վերջին երեք տասնեակ տարիների պատմութիւնը փաստերի և ապացոյցների մի ովկիանոս է։ Մենք այդ չենք կարող մոռանալ, որովհետև չափազանց ծանր և ցաւոտ կերպով ենք տանջվել ու տուժել և չափազանց մեծ զոհեր տուել մեր ժողովրդից։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշուց, դեկտեմբերի 21-ից, մեզ գրում են.

Խանքենդ աւանի հայերի վրա յարձակվեցին շրջակայ գիւղերի թուրքերը։ Հայերը և կոզակները յետ մղեցին թուրքերի յարձակումը։ Թուրքերից սպանված են մօտաւորապէս 30 հոգի. վիրաւորների թիւը անորոշ է։ Հայերից սպանված են 3 և վիրաւորված 6 հոգի։ Թուրքերից շատերը փախուստ տալով՝ պատսպարվել էին տեղական զօրանոցում, որտեղից, կոզակների ուղեկցութեամբ, տարվեցին մօտակայ Մալիբէգլու թուրք գիւղը։

Քաղաքումս սաստիկ լարված դրութիւն է։ Ընդհարումը անխուսափելի է։ Ուտելեղէնի սաստիկ թանգութիւն է։ Հացի պութը 2ր. 40 կ.—2ր. 80 կ., շաքարի ֆունտը 65—70 կոպ., նաւթ համարեա թէ չը կայ, եղածն էլ՝ 25—30 կոպ. ֆունտը։ Եթէ շուտով ալիւր չը հասցնվի քաղաքիս—սովը անխուսափելի կը լինի։ Քաղաքիս չունևոր դասակարգի դրութիւնը սարսափելի կրիտիքական է։ Պէտք է ասել, որ նոյն անել դրութեան մէջ են և թուրքերը։

Քաղաքիս հայ վաճառականները դժուար կացութեան մէջ են դրված. թէ քաղաքիս և թէ շրջակայ գիւղերի թուրքերը հազարներով պարտ լինելով հայ վաճառականներին՝ վճռապէս որոշում են կայացրել իրանց պարտքերը չը վճարել և իսկապէս չեն էլ վճարում...

—

Լրագրի հրատարակութեան ընդհատման պատճառով շատ կարևոր և հետաքրքրական նիւթեր, որոնք վերաբերվում էին հայ-թուրքական յարաբերութիւններին և դէպքերին, անկարող եղան լոյս տեսնել իրանց ժամանակին։ Մենք կաշխատենք գլխաւոր իրողութիւնները և եղելութիւնները հաղորդել «Մշակի» հետևեալ համարներում։

Ամենից շատ դեռ անհանգիստ վիճակի մէջ է Գանձակի նահանգը։ Ղազախի, Ջիւանշիրի, Շուշու և Զանգեզուրի գաւառներում դեռ տեղի ունեն յուզմունքներ։

Բագւում ներկայումս խաղաղութիւն է տիրում։ Երևանեան նահանգում բաւ մեծի մասին հանգիստ է։ Սև ծովի ափերում սկսվել էր յուզմունք, որ ներկայումս ըստ երևոյթին թուլացել է։

—

Գործադուլի օրերում շատ յուզիչ լուրեր հասան մեզ Սև ծովի ափում բնակված հայերի մասին։ Հեռագիրներից մենք տեղեկացանք, որ աբխազների հրոսակախմբեր յարձակվել են հայերի վրա, կողոպտել նրանց և սպանել։

Մենք տեսակցեցինք իշխան Պրօխոր Շերվաշիձէի հետ, որը Սուխումի շրջանի խոշոր կալուածատէրերից մէկն է և, ինչպէս մեր ընթերցողները յիշում են, հայ ծխախոտագործների ամենաջերմ պաշտպաններից մէկն է։ Իշխան Շերվաշիձէն այն կարծիքին է, որ աբխազների շարժումը, ըստ երևոյթին, աւազակային շարժում է, որովհետև աբխազների և հայերի մէջ թշնամութիւն չէ եղել մինչև այժմ. և աբխազները հայերի վրա նայում են իբրև օգտակար տարրի վրա, որ ծաղկեցրել է արդիւնաբերութիւնը Աբխազիայում։

Իշխան Շերվաշիձէն սրանից մի ամիս առաջ եղել է Աբխազիայում և այն ժամանակ նա չէ նկատել յուզմունք հայերի դէմ։ Ճիշդ է, հաղորդեց նա, Աբխազիայում վերջին ամիսներում եղել են գործողներ, որոնք դրդում են եղել այնտեղ ևս առաջ բերելու այնպիսի շարժում, ինչպէս որ տեղի ունեցաւ Գուրիայում։ Բայց աբխազները չեն յարել գուրիական շարժման։ Ինքը իշխան Շերվաշիձէն էլ իր կողմից խորհուրդ է տուել աբխազներին զգոյշ լինելու որ և է յուզմունքներից, որովհետև նախկին երկու աբխազական յուզմունքները միայն վնասել են աբխազներին և պատճառ են դարձել ժողովրդին մայր հայրենիքը թողնելու և դէպի Թիւրքիա գաղթելու։ Աբխազները վճռել են ներգործական քայլեր չանելու և նոր դժբաղդութիւններ չաւելացնելու իրանց երկրի վրա։

Մենք տեսակցեցինք նաև փոխարքայի օգնականի հետ և զեկուցանելով եղելութեան մասին, ընդգծեցինք եռանդուն միջոցների անհրաժեշտութիւնը, որպէսզի յուզմունքները իրանց սկզբնական քայլում, իրանց սաղմնային վիճակի մէջ սահմանափակվեն և խեղդվեն։ Մեզ յայտնեցին, որ այնտեղի գաւառապետը, իշխան Ջանդիերին, վտանգելի անհնարութիւն է և յոյս կայ, որ նրան աջողվի զսպելու աբխազական յարձակումները։

Հեռագիրների մէջ յիշված է աբխազական աւազակապետ Ինալիպայի անունը։ Ինալիպան վերջին ժամանակներս թողել էր իր ասպատակութիւնները. իսկ այժմ, ինչպէս երևում է, նա նորից սկսել է շարժվել։

Մենք սպասում ենք նորագոյն տեղեկութիւնների։

—

Ղազախի գաւառի Կըրզան հայ գիւղի Տէր-Համբարձում Պօղոսեան քահանան մտնելով «Մշակի» խմբագրատուն, պատմեց մեզ հետևեալ տեղեկութիւնները թշուառացած Կըրզան գիւղի մասին։

Կըրզան հայ գիւղը իսպառ աւերված և ասպատակված է։ Գիւղացիները թողել են գիւղը և փախել։ Ներկայումս նրանք գտնվում են իբրև գերիներ թուրքերի ձեռքին։

Գիւղը գտնվում է Կուր գետի ափին, կղզիացած միւս հայ գիւղերից։ Նա ունի բարեբեր, ջրարբի, արգաւանդ հողեր, որոնք յարմար են թէ հացաբոյսեր մշակելու և թէ այգիներ գծելու։ Միայն մի անյարմարութիւն կայ այդ գիւղում, որ ջերմ ու տենդի պատճառով ազգաբնակութիւնը շատ դանդաղ է աճում։ Կըրզան ունի 35 տուն մօտ 240 շնչով։

Աղէտը Կըրզանում տեղի է ունեցել հետևեալ կերպով։

Երբոր Գանձակում սկսվում են հայ-թուրքական ընդհարումներ, այն ժամանակ Կըրզանի դրութիւնը դառնում է շատ վտանգաւոր, որովհետև գիւղը շըրջապատված է թրքական գիւղերով։ Այն ժամանակ մերձակայ թուրք Մասուրլու կոչված թուրք օբայի բնակիչները, իբրև վաղուցվայ բարեկամներ առաջարկում են հայերին պատսպարվել իրանց մօտ։ Հայերը համաձայնվում են և տեղափոխվում են Մասուրլու։ Սակայն Բօզադանլու թուրք գիւղի գլխաւորները չեն ցանկանում, որ մասուրլուեցիները հովանաւորների դերում լինեն և պահանջում են, որ հայերը յանձնվեն իրանց։ Բօզադանլեցիները քշում են հայերի տաւարը ու ոչխարը, իսկ մարդկանց բաժանում են իրանց մէջ և յայտնում նրանց, որ եթէ լեռնային գիւղերում հայերը յարձակողական դիրք բռնեն, այն ժամանակ իրանք էլ կը կոտորեն Կըրզանի հայերին։ Սկսած նոյեմբերի 28-ից մինչև այժմ կըրզանցիները գերութեան մէջ Բօզադանլեցիները են։ մի ուրիշ յետին դիտաւորութիւն ունեն։ Նրանք աչք ունեն Կըրզանի հողերի վրա։ Եթէ նրանք կոտորեն հայերին, այն ժամանակ կը տիրանան նրանց հողերին, մանաւանդ որ վերջին ժամանակներս բօզադանլեցիները զրկվել էին Իսկանդարբէկօվների կալուածքի հողերից, որոնցով նրանք օգտվել են շատ տարիներից ի վեր։

Կըրզանցիների ներկայ դրութիւնը սարսափելի է։ Նրանք ամեն օր մահի դատին կանգնած, տանջվում են և տուժում. օգնութիւն չը կայ ոչ մի կողմից։ Իսկ թուրքերը ոչ միայն չեն մեղմանում, այլ և խոստանալով առաջարկում են հայերին փոխել իրանց կրօնը։

Կըրզանցիների համար այսուհետև անկարելի է լինելու մնալ իրանց գիւղում։ Եթէ կարելի լինէր այդ գիւղը տեղափոխել դէպի հայաբնակ շրջանը, կարող էր ապահովութիւն լինել։ Օրինակ, եթէ Կըրզան գիւղը և Հաջալու թուրք գիւղը մէկը միւսի հետ փոխարինէին իրանց հողերը, այն ժամանակ երկու գիւղի համար էլ լաւ կը լինէր, որովհետև հաջալեցիներն էլ վախենում են մօտակայ հայերից։

Կըրզանի քահանան, գալով Թիֆլիս, դիմում է արել փոխարքայի օգնականին և խնդրել օգնութիւն։

ԹԻՖԼԻՍԻ ԴԷՊՔԵՐԸ

(Պաշտօնական հաղորդագրութիւն)

Դեկտ. 22-ին, օրվայ ժամը 1-ին, Սօլդատսկի բազարում, հայոց Ներսիսեան դպրոցին պատկանող շինութիւնից, անյայտ չարագործներ ձգեցին երկու ռումբ Լաբինսկի գնդի շրջիկ կոզակների վրա, որոնց պայթումից վիրաւորվեցին 3 կոզակ և մի զինուոր, սպանվեց անյայտ կոչման մի տղայ և վիրաւորվեցին երկու ձիեր,

Վերոյիշեալ տունը իսկոյն շրջապատվեց զօրքերով և հարուածվեց հրացանային ու թնդանօթային կրակով և ոչնչացրվեց դրանից ծագած հրդեհով։ Այդ տան մէջ պահված փամփուշտների և ռումբերի պայթման պատճառով հնարաւոր չեղաւ հանգցնել հրդեհը և հրդեհաշէջ կօմանդայի գործողութիւնները ուղղվեցին բացառապէս հարևան տների և խանութների պահպանութեան համար։

Հետևեալ օրվայ առաւօտեան քաղաքային հիւանդանոցները բերվեցին 29 սպանվածներ և հրդեհից այրվածներ և 30 վիրաւորներ, իսկ դեկտեմբերի 24-ին հանեցին այրված տնից էլի 4 դիակներ։

Դեկտ. 23-ին, ցերեկվայ ժամը 12-ին մօտ, Կիրպիչնօյ փողոցում, Ախշարումովի տան մօտ, մի անյայտ չարագործ վիրաւորեց ատրճանակի հարուածով պօրուչիկ Եասօն Ջիրկվելովին այն ժամանակ, երբ մտնում էր իր բնակարանի բակը։

Նոյն օրը Տխինվալսկի փողոցում Ցուրինովի տնից, վիրաւորվեց ատրճանակի հարուածով այդտեղից անցնող մի ոստիկան՝ կրծքից։ Յանցաւորը կարողացաւ թաքնվել։ Դրանից յետոյ այդ տան մէջ անյայտ պատճառից առաջացաւ հրդեհ, որի ժամանակ հրդեհաշէջները հանեցին տան փլատակներից Վասիլի Խուցիշվիլու դիակը։

Նոյն օրը, երեկոյեան ժամը 6-ին, զինուորական պահակը ձերբակալեց Ալչալեան փողոցում մի ֆայտօն, երկու կասկածելի ուղևորներով, որոնց խուզարկելիս գտան մի մի լցված ռումբ։ Ստանալով ցուցմունք, որ ռումբեր գտնվում են Եգիգարովի տան մէջ, Շեբելեանսկի և Ելիսաւետինսկի փողոցների անկիւնում, Դիդուբէում, այդ տունը շրջապատվեց զօրքերով, խուզարկութիւն կատարելու համար։

Զօրքը դեռ չէր կարողացել դիմել իր պարտաւորութիւնների կատարման, երբ յիշեալ տնից և հարևան Բաբա-Այվազովի տնից սկսվեցին անընդհատ հրաձգութիւններ և ռումբերի նետումներ, որոնց զօրքը նոյնպէս պատասխանեց հրաձգութեամբ։ Ի նկատի ունենալով, որ չը նայելով զօրքի հրացանաձգութեան, հրաձգութիւնը և ռումբերի նետումը այդ տներից չէին դադարում,—հեռացնելով նրա միջից բոլոր խաղաղ բնակիչներին, կանանց և երեխաներին, նա ենթարկվեց թնդանօթային կրակի։ Հրաձգութեան և ռումբերի նետման ժամանակ չարագործները վիրաւորեցին մի կոզակ և մի զինուոր ու սպանեցին երկու մասնաւոր մարդ. իսկ ռումբ նետողներից սպանվեցին 8 հոգի։ Եգիգարովի տան մէջ թնդանօթաձգութիւնից առաջացած հրդեհի ժամանակ տեղի ունեցան 4 պայթումներ, ըստ երևոյթին այնտեղ պահված ռումբերից։ Իսկ Բաբա-Այվազովի տանը պայթման զօրեղից վնասվեց վարպետ Վասիլի Բօնդարենկօյի ընտանիքը, որը հաւանօրէն, մի որ և է տեղ թաքնվել էր այն ժամանակ, երբ օֆիցերները դուրս էին հանում բնակիչներին։

Դեկտեմբերի 24-ին, երեկոյեան ժամը 8-ին, Անդրեէվսկի փողոցում, № 68 տան տանիքից անյայտ չարագործներ մօտ 50 հրաձգութիւն կատարեցին օդում, ըստ երևոյթին, խառնակութիւն առաջ բերելու համար։ Գրեթէ միաժամանակ չարագործները մի քանի անգամ կրակ բացեցին Անդրկովկասեան երկաթուղիների վարչութեան շինութեան վրա, հաւանօրէն այն նպատակով, որ սարսափահար անեն գործադուլին չը մասնակցող անձանց։

Երեկոյեան ժամը 10-ին, կոզակային պահակը հարուածեց «Զապատ» հիւրանոցը, որ գտնվում է վօկզալի հանդէպ, որտեղից նրա վրա կրակ էին արել։

Այդ հրաձգութիւնների ժամանակ վնասված և ձերբակալված չեն եղել։

Դեկտ. 25-ին ցուցմունք ստացված լինելով, որ Շահ-Նազարովի տան մէջ, Պաւլովսկի փողոցում, զետեղված է հայ յեղափոխական կօմիտէտի բանդը, այդ տան մէջ խուզարկութիւն կատարվեց, որով Ղազախի գաւառի բնակիչներ Վասիլ Շահնազարովի, Ստեփան Նայրումովի, Աւագ Եւրակովի և Աբգար Սուլխանովի բնակարանում գտնվեցին զանազան զէնքեր և 6 ռումբ, որոնցից երկուսը արդէն պատրաստ նետման համար։ Բոլոր վերոյիշեալ անձինք ձերբակալված են։

ՓՈԽԱՐՔԱՅԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐԻՆ 1905 Թ. ԴԵԿՏ. 29-ԻՆ

«Ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձերդ Կայսերական Մեծութեան, որ Ռուսաստանի հետ հաղորդակցութիւնից զրկված լինելու, պօստ-հեռագրական գործադուլի և կեղծ լուրերի ազդեցութեան տակ, որ տարածում էին ծայրահեղ կուսակցութիւնները, յեղափոխական շարժումը Անդրկովկասում ամեն տեղ սուր կերպարանք ստացաւ։ Երկաթուղին գրաւող յեղափոխականները, բաց էին թողնում գնացքները միայն իրանց ընտրութեամբ։ Թիֆլիսում նրանք յայտարարեցին գործադուլ ամբողջ առևտրի և փորձեցին գործադուլ սարքել կառավարչական հաստատութիւնների մէջ։ Այդ պատճառով ես յայտարարեցի Թիֆլիսը, իր գաւառով՝ զինուորական դրութեան մէջ։ Գօրուց եկած գեներալ-մայոր Ալիխանովը ստանձնեց ժամանակաւոր գեներալ-նահանգապետի պաշտօնը։ Աջողվեց գտնել ռումբերի մի քանի պահեստներ և կալանաւորել մի քանի ագիտատորներ։ Թիֆլիսի հետ միաժամանակ պատերազմական դրութեան մէջ յայտարարվեց Անդրկովկասի երկաթուղին։ Նրա գծի վրա արդէն գտնում են զինուորական գնացքներ, ձերբակալելով ագիտատորներին և գործադուլ սարքողներին։ Փորու և Դուշէթի գաւառներում նոր հանդարտուած ագրարային շարժումը ընդհանուր յեղափոխական շարժման ազդեցութեան տակ վերսկսվեց, ուստի ես յայտարարեցի այդ գաւառները զինուորական դրութեան մէջ, նշանակելով գեներալ-նահանգապետ՝ գեներալ-մայոր Բոցերին։ Համեմատաբար հանդարտութիւն է Դաղստանում, Բաթումում, Երևանի նահանգում և Կարսի շրջանում։ Գանձակի նահանգում հայերի ընդհարումները թուրքերի հետ շարունակւում են։ Պոստ-հեռագրական գործադուլը վերջացաւ։ Գործադուլի տեղական բիւրոյի անդամները կալանաւորված են և հաղորդակցութիւնը կը բացվի այս օրերս։ Հիւսիսային Կովկասում բոլոր կայարանները Ռոստովից մինչև Բեսլան գրաւված են զօրքերով։ Գործադուլի ղեկավարներից շատերը ձերբակալված են։ Գնացքները Ռոստովից բաց են թողնված։ Երկաթուղու վարչութիւնը ստանձնում է իր պաշտօնը»։

Կոմս Վօրօնցով-Դաշկով

ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԵՆԵՐԱԼ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼԸ

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի, 1905 թ. դեկտեմբերի 14-ին № 201

Ի նկատի ունենալով, որ վերջին օրերս ծայրահեղ յեղափոխական կազմակերպութիւնները հանդէս են եկել ակտիվ գործողութիւններով, որոնք արտայայտվեցին երկաթուղու գծի բռնի գրաւմամբ և գործադուլ սարքելով, Թիֆլիսի առևտրական և արդիւնաբերական ձեռնարկութիւնների փակմամբ, պօստի հեռագրի վերականգնման արգելմամբ, ես անհրաժեշտ համարեցի յայտնել, Բարձրագոյնս ինձ յանձնված իշխանութեան հիման վրայ, զինուորական դրութիւն Թիֆլիս քաղաքում և գաւառում և Անդրկովկասի երկաթուղու վրայ։ Զինուորական և քաղաքացիական իշխանութեան միացումը զինուորական դրութեան մէջ յայտարարված տեղերում, յանձնում եմ իմ օգնական, գեներալ-լէյտենանտ Մալամային, դնելով նրա վրայ և ժամանակաւոր գեներալ-նահանգապետի պաշտօնը»։

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի 26 դեկտ. 1905 թ. № 212.

Արձակելով զինուորական մասի իմ օգնական գեներալ-լէյտենանտ Մալամային, նրան յանձնված գործերի բարդութեան պատճառով, ժամանակաւոր գեներալ-նահանգապետի պարտաւորութիւնների կատարմանից, առաջարկում եմ Կովկասի զինուորական շրջանի զօրքերի մօտ եղած գեներալ-մայոր Ալիխանօվին ստանձնել Թիֆլիս քաղաքի և գաւառի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի պաշտօնը։

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

XXII

Մեր լրագիրը դեկտեմբերի 12-ից սկսած մատնված էր ակամայ լռութեան։

Այս ակամայ լռութիւնը հետևանք էր այն ընդհանուր քաղաքական գործադուլին, որ յայտարարեց ռուսաց սօցիալ-դեմօկրատական բանւորական կուսակցութեան Թիֆլիսի կենդրօնական կօմիտեը (որին, միացաւ նաև հայ յեղափոխական Դաշնակցութեան Թիֆլիսի կօմիտեն) չը նայելով, որ Պ. Բուրգում սկզբունքով ընդունված էր Ս. Դ. Բ. կուս. ընդհանուր ժողովից, որ գործադուլը չէ կարելի և չը պէտք է տարածել մամուլի վրայ։

Չը պահպանելով այդ սկզբունքը, ստիպելով գրաշարներին չաշխատել և դատապարտելով դրանով տեղական ռուս և հայ մամուլը ակամայ լռութեան, մի այնպիսի ժամանակ, երբ հասարակութիւնը աւելի քան երբ և իցէ պէտք ունէր լսել ազատ և անկեղծ խօսք, ղեկավարվել, գործադուլը յայտարարող և պաշտպանող կազմակերպութիւնները, մոռանալով, որ տպագրական խօսքը նոյնքան անհրաժեշտ է մարդին, որքան օդը և սնունդը, ընկան մի ուրիշ ծայրահեղութեան մէջ, որ միահամուռ դատապարտվեց հասարակութեան բոլոր խաւերից, իբրև հակառակ տարրական արդարութեան և իբրև բռնութիւն։ Այդ կազմակերպութիւնները դադարեցնել տալով բոլոր պարբերական հրատարակութիւնները, բացառութիւն արին իրանց սեփական, կուսակցական օրգանների համար և առաջացաւ այն ծայրահեղ անարդարութիւնը և տարօրինակ երևոյթը, որ խօսքի և մամուլի ազատութեան համար մարտնչողները իրանք դաւաճանեցին այդ ազատութեան վեհ սկզբունքին, բռնացան մտքի և խօսքի ազատութեան վրայ, խլեցին այն ազատութիւնը, որը ձեռք բերելու համար Ռուսաստանի լաւագոյն ոյժերը տուեցին անհամար զոհեր, թափեցին նոյն իսկ արիւն, մղեցին երկարամեայ յամառ և տաժան պայքար…

Տեղական մամուլը ստիպված լինելով գիջանել բռնութեան առաջ և լռել, մասամբ, բնականաբար, մի միջոց գտնել ապագայում այդպիսի բռնութիւնների այլ ևս չենթարկվելու համար. նա որոշեց կազմակերպել համակովկասեան մամուլի դաշնակցութիւն։

Անհասարակ, վերջին ընդհանուր գործադուլը համարվում է հասարակութեան մեծամասնութեան և առողջ դատողութեան կողմից աննպատակայարմար և վնասակար՝ մենք կը բերենք ձեռնհաս և հեղինակաւոր անձանց ու օրգանների կարծիքները։

Այդ կարծիքները ցոյց կը տան, որ գործադուլները և յեղափոխութիւնը առհասարակ օգտակար են այն չափով, որքան նրանք չեն դառնում հակա-կուլտուրական միջոցներ և չեն փոխվում անիշխանութեան ու կազմալուծութեան, այլապէս նրանք ուժեղացնում են միայն ռեակցիան և ջլատում ժողովրդի կենսական ոյժերը։

Ընդհանուր գործադուլ սարքելը, ամբողջ երկրի մէջ կեանքի հոսանքը, շարժումը կանգնեցնելը—դրանք այնպիսի արմատական, խիստ և ծայրահեղ միջոցներ են, որոնց կրկնումը կամ երկարատև շարունակութիւնը կարող է սաստիկ վտանգաւոր և նոյն իսկ մահաբեր լինել գործի համար։ Հետևաբար, այդպիսի արմատական միջոցների կրկնութեան վերաբերմամբ պէտք է վերին աստիճանի զգոյշ լինել. կայ դեղ, որ կենդանացուցիչ է, բայց եթէ նա կրկնվում է, կարող է մահաբեր լինել։ Հոկտեմբեր ամսին յայտարարած գործադուլը ընդունվեց հասարակութեան կողմից անտրտունջ և ահագին պատմական նշանակութիւն ունեցաւ իր կարևոր հետևանքներով, բայց նրա կրկնութեան փորձը խիստ ձախող էր, անժամանակ, ուստի և միայն ապարդիւն, ահագին վնասներ հասցնելով թէ ազգայնականութեան և թէ յեղափոխութեան գործին։

Այժմ առաջ բերենք վերևում մեր յիշած կարծիքները.

«Рус. Вѣдомости» լրագիրը (№ 299), որի լրջութիւնը և քաղաքական հասունութիւնը հանրածանօթ է, իր առաջնորդող յօդուածի մէջ ասում է. «Պետական կեանքի հին ձևերից նորերին անցնելը կատարվում է մեզ մօտ ժողովրդական ամբողջ անտեսութեան ահագին ցնցումով. դա—փաստ է, որը հաշւի պէտք է առնեն ոչ միայն արդիւնաբերութիւնը, կառավարութիւնը, այլ և բանւորական մասսաները։ Քաղաքական այն նպատակը, որ ի նկատի ունէին, երբ երկրի մէջ առաջ բերին արդիւնաբերող գործունէութեան ընդհանուր դադարումը, անկասկած, արժանի էր տուած զոհերին։ Միայն չը պէտք է մոռանալ, որ այդ ուղղութեամբ արած մեր ամեն մի յառաջադ քայլը մօտեցնում է մեզ անտեսական, ֆինանսական աղէտի, որը կարող է երկար ժամանակ քայքայել մեր ամբողջ երկրի, մեր ամբողջ ժողովրդի բարեկեցութիւնը։ Երկրի անտեսական կեանքը օրէցօր աւելի և աւելի է մահանում. Շարունակական գործադուլները, ֆաբրիկների աւերումը, երկաթուղային անկանոն շարժումը, բազմաթիւ ընդհարումները, վաղվայ համար ապահովութիւն չունենալը, որ անդամալուծում է առևտրական բոլոր շրջանառութիւնները, վերջապէս վերջին օրերի ջարդերը, աւերումները—այդ ամենը ընկղմում է երկիրը անտեսական անիշխանութեան մէջ և հասցնում կատարեալ սնանկութեան։ Ահագին դրամագլուխներ պէտք է անդառնալի կերպով կորած համարվեն, անկարգ արտադրութիւնը, որ առաջ է գալիս բանւորների և ձեռնարկողների մէջ եղած հաստատ յարաբերութիւնների՝ բացակայութիւնից ոչնչացնում են բոլոր հաշիւները։ Եթէ քաօսական վիճակին իբրև պատասխան լինի շատ ֆաբրիկների և գործարանների փակումը, ինչ որ արդէն սկսել է նկատվել, դրանից վնասվողները ամենից առաջ կը լինեն բանւորները, որոնց համար աշխատանքը գոյութեան միակ աղբիւր է։ Եւ միթէ կարելի է լուրջ կերպով յուսալ, թէ այսպէս կոչված յայտարարական կարգով կարելի է հաստատել բանւորական դաշնագրի պայմանները և բանւորական օրի մեծութիւնը, այսինքն ոչ թէ երկու կողմերի փոխադարձ համաձայնութեամբ, կամ ընդհանուր օրէնքով, այլ միայն մի կողմի պահանջով։ Պարզ է, որ ֆաբրիկների փակումը շատ դէպքերում միակ ելքն է հանդիսանում այդպիսի դրութիւնից։ Երբ ֆաբրիկանտը, համաձայնվելով իրան առած բոլոր պահանջներին, այնուամենայնիւ ապահով չէ, որ բանւորները ամեն մի, նոյն իսկ աննշան դէպք պատրուակ բռնելով, բանութեան սպառնալով չեն հեռանալ, երբ հացի առևտրականը ապահով չէ, որ բեռնը ժամանակին կը ստանայ, երբ ալիւրաղացը չէ կարող ցորեն գնել, որովհետև ամեն՝ րօպէ նրանց սպառնում է գործադուլ, երբ գաւառը, որի համար աշխատում են ֆաբրիկներից շատերը, դարձել է կողոպուտների և սպանութիւնների հրապարակ—այդպիսի կացութեան մէջ անտեսական ամբողջ կեանքը կատարեալ քայքայման է հասնում։ Դրան չէ կարող դիմանալ ոչ մի ժողովրդական անտեսութիւն, ևս առաւել մերը, որ առանց այն էլ ցնցված է աւերիչ պատերազմից և ուրիշ աղէտներից։

«Աշխարհումս ոչ մի տեղ անտեսական կեանքը [illegible] չէ ընթանում. ոչ մի տեղ բանւորական դասակարգը չէ մոռանում, թէ պէտք է հաշւի առնել արդիւնաբերական կեանքի հիմնական պահանջները, նրա գոյութեան պայմանները։ Չէ կարելի սպասել բանւորական դասակարգերի վիճակի հիմնային բարւոքումն այնպիսի գործողութիւններից, որոնք տանում են երկիրը դէպի աւերում։ Ամենից առաջ բանւորները կը վնասվեն այն անկումութիւնից, որին մենք մօտենում ենք, հարիւր հազարաւոր բանւորներ և նրանց ընտանիքները դուրս կը շպրտվեն փողոց»։

Այս արդարացի կարծիքին մենք պէտք է կցենք յայտնի հրապարակախօս Միլիւկովի կարծիքը, որ ասում է թէ «անընդհատ» յեղափոխութիւնը կարող է ամրացնել միայն ռեակցիան։

«Արդեօք մենք յեղափոխութեան դէմ ենք։ Արդեօք մենք ժողովրդի հետ ենք, թէ կառավարութեան հետ։ Այո, մենք յեղափոխութեան հետ ենք, որքան նա ծառայում է քաղաքական ազատագրութեան և սօցիալական ռէֆօրմների նպատակներին, բայց մենք նրանց դէմ ենք, որոնք յայտարարում են յեղափոխութիւնը «անընդհատ», որովհետև ենթադրում ենք, որ անընդհատ յեղափոխութիւնը, յեղափոխութիւնը ինչ գնով և լինի—ծառայում է միայն ռէակցիայի նպատակներին և ամրացնում է կառավարութեան հակա-յեղափոխական դաւերը։ Այո, մենք ժողովրդի հետ ենք, բայց մենք հերքում ենք այն մարդկանց յաւակնութիւնը, որոնք միայնակ կամենում են խօսել ժողովրդի անունով «գիտակցական պրօլետարիատի» տեսական հասկացողութեամբ։

Պետր Ստրուվէ, ազատագրական շարժման առաջնորդներից մէկը, նոյն «Рус. Вѣд.» մէջ ասում է.

«Հոկտեմբերեան քաղաքական գործադուլը մեծ դէպք և գործ էր։ Ռուս մարդիկ համարձակ կարող են նրան անուանել փառաւոր գործադուլ։ Բայց այդ հզօր աւերիչ գործիքից մեզ համար «կուռք» չը շինենք։ Գործադուլը, այսօր փրկարար և փառաւոր, վաղը կարող է դառնալ կործանիչ և յանցաւոր։ Անցեալ գործադուլը մեծ էր իր տարերական զօրութեամբ։ Բայց ջանանք, լարենք մեր բոլոր ոյժերը, որպէս զի շուտով դուրս գանք տարերային իշխանութիւնից։ Մեզ անհրաժեշտ է, որքան կարելի է շուտ վերջ տալ կուլտուրական անկազմակերպութեան պրօցէսին, որ գրաւել է մեր բարձր և միջնակարգ կրթութիւնը։ Երիտասարդութիւնը գրգռված է, ասում են մեզ, նա չէ կարող ուսանել։ Թող այդպէս լինի. բայց մենք պատրաստ ենք ասել երիտասարդութեան, որ նա չէ կարող, չը պէտք է իր գրգռումը այնքան առաջ վարէ, որ դարձնէ պրինցիպ ընդդէմ գիտութեան և գիտական կուլտուրայի։ Քաղաքականութեան դիկտատուրան կուլտուրայի վրայ անկայուն է, որովհետև յեղափոխութիւնը չէ կարող դառնալ հակա-կուլտուրական, եթէ ոչ ինքն իրան կը կործանէ։ Ահա ինչու մենք յանուն յեղափոխութեան պէտք է բողքենք և ակտիվ կերպով կռուենք յեղափոխականացման այն մեթօդների դէմ, որոնք վնասում են յեղափոխութեան։ Ֆաբրիկանտները կարող են, օրինակ, հեռանալ անտեսական կազմալուծութիւնից, փակելով ֆաբրիկաները և փախչելով արտասահման իրանց դրամագլուխներով, բայց բանւորները և գիւղացիները իրանց կանանցով և երեխաներով կարող են հեռանալ նրանից, միայն գերեզման իջնելով»։

Մի ֆրանսիացի մտածող ասել է. ազատութիւնը կայանում է նրանում, որ մարդ իր ժամանակին չասէ այն, ինչ որ չը պէտք է ասել։ Այլաբանելով, կարող ենք ասել. յեղափոխական ազատութիւնը կայանում է նրանում, որ իր ժամանակին չանվի այն, ինչ որ չը պէտք է անել։ Այդ ճշմարտութիւնը հասկացել է և հայ Դաշնակցութեան Բաքուի կօմիտեն, որ ըմբռնելով վերջին գործադուլի վնասակարութիւնը, իր բոլոր ոյժով հակառակվել էր նրան և գործադուլը Բագվում տեղի չէր ունեցել։

Շահրիար

ՋԱՀՈՒԿԻ ՆՈՐ ԴԷՊՔԵՐԸ

Դեկտեմբերի 4-ին

I

Դժբախտ Ջահուկն իր եօթնամսեայ հանդարտութիւնից յետոյ նորից արեան բեմ դարձաւ։ Այս անգամ էլ գուժենք մեր ընթերցողներին այն զարհուրելի ընդհարումները, որ տեղի ունեցան Ջահուկում նոյեմբերի 29-30-ին։

Թէ ինչ չարագուշակ երևոյթներ այդ ընդհարումների նախերգանքը կազմեցին, դեռ պարզ չէ մեզ համար, սակայն իրողութիւնն այն է, որ նախ քան կռիւն սկսվելը հարևան գիւղերից և օտար տեղերից կասկածաւոր թուրքեր էին լցվում Ջահուկ՝ թէ ձիաւոր և թէ հետիոտն։ Այդպիսի դադանի շարժում սկսվեց Ջահուկցի թուրքերի մէջ Նախիջևանի վերջին դէպքից յետոյ, երբ անցեալ նոյեմբերի վերջերին քաղաքում այրվեց թուրքերի շուկան։

Նոյեմբերի 28-ի լոյս 29-ի գիշերը թուրքաց ներքևի թաղում, որ շփվում է հայոց ներքևի փոքրիկ թաղի հետ, մզկիթի հրապարակում թուրք ձիաւոր խմբեր էին տեղաւորվում և նրանց միջից խորհրդաւոր շշուկներ և թեթև իրարանցման ձայներ էին լսվում ընդհատ-ընդհատ ստւերներով։ Այդ բոլորը նկատում էր գիշերապահ զինուոր՝ Իլիա Աստապովը, որն իր եօթն ընկերներ պատրուլների հետ գտնվում էր հայ-թուրքական սահմանում։

Աստապովը, լուսնկայ գիշերին նկատելով թուրքերի խորհրդաւոր շարժումները, զգում է չարագուշակ մի բան և ձայն տալիս թուրքերին։

—Ո՞վ էք, ինչ մարդ էք…

Հարցը մնում է անպատասխան։ Գիշերապահը նորից է կրկնում իր հարցը և այս անգամ էլ պատասխան չը ստանալով, շտապում է և այդ մասին յայտնում գիւղում գտնվող օֆիցերին՝ Բեգիչևին, խնդրելով ուժեղացնել պատրուլները։ Բեգիչևը անմիջապէս ուժեղացնում է պատրուլների թիւը և հրամայում, որ թուրքերի յարձակման ժամանակ դիմադրութիւն ցոյց տան մինչև զօրքի հասնելը։ Աստապովը վերադառնում է իր տեղը և զգուշացնում հայերին, որ արթուն մնան՝ չը լինի թէ վտանգ պատահի։

Առաւօտեան ժամի $5^1/_2$-ին մզկիթի հրապարակից խիստ հրաձգութիւն տեղի ունեցաւ հայոց թաղի վրայ։ Պատրուլները դուրս թռան և սկսեցին թուրքերին պատասխանել նոյնպէս հրացանների զալպերով։ Աստապովը օգնութեան աղաղակեց միւս զինուորներին և մի բուռն հայերին։ Կանայք և երեխաներ ճչալով փախան և պատսպարվեցին դատարանում և պրիստաւի բնակարանում։ Իսկ տեղական երիտասարդներից մի փոքրիկ զինված խումբ դուրս ելաւ և միանալով զօրքի հետ սկսեց դիմադրել թուրքերին։ Հրաձգութիւնը երկու կողմից էլ կատաղի էր։

Ռուսներից վիրաւորվեցին 2 հոգի՝ մէկը ծանր իսկ միւսը թեթև. հայերից ընկաւ մէկը և թեթև վիրաւորվեցին երկու հոգի։

Այդ կորուստներից գրգռված ռուս-հայկական միացեալ խումբը սկսեց առաջ շարժվել և հրացանների անընդհատ զալպերով դուրս քշեց թուրքերին մզկիթի բակից դէպի վերևի թաղերը։

II

Լոյսը բացվեց։

Թուրքերն ամրացան ունիթոռական եկեղեցու բարձունքներում և այնտեղից սկսեցին կրակ բանալ հայերի և զօրքի վրայ։

Զօրքը կենտրոնացաւ և դիրք բռնեց հայոց հին այրված շուկայում։

Հայերի մի փոքրիկ խումբ գրաւեց գիւղի հայոց աւերակ թաղում մի բարձր սենեակ թուրքերի առաջն առնելու համար, իսկ միւս խումբը՝ բաղկացած 10 կտրիճ երիտասարդներից, կատաղաբար ներս խուժեց թուրքերի թաղը և գրաւեց «Թախտ-բաշի» կոչված փոքրիկ բարձրութիւնը, ուր գիւղի յայտնի չարագործների բնակարաններն էին գտնվում, և այնտեղից ունիթոռական եկեղեցու սառն բարձունքից ուժեղ հրաձգութեամբ վայր իջեցրեց թուրքերին։ Իսկ եկեղեցու կտուրին դիրք բռնող թուրքերին վայր իջեցնել չաջողվեց ոչ հայերին և ոչ էլ զօրքերին։ Հայերը սկսեցին թուրքերի տներից դուրս քաշել իրանց կողոպտված կարողութիւնները. մի քանի անձինք սկսեցին հրդեհել թուրքերի տները։ Տեսարանը սոսկալի էր. հրացանների խլացուցիչ զալպերը, կարկուտ նման տեղացող գնդակների մահաբեր վժժոցը, գոռում-գոչումը, «ուռա, եա Ալի» աղաղակները, բռնկվող հրդեհը, ներկայացնում էին դժոխային տեսարան։ Դա ընդհարում չէր, այլ արիւնահեղ պատերազմ. որոտում էին աւելի քան 700 հրացաններ։ Վերջին ռուս-ճապոնական պատերազմին ականատես եղող ծեռունները այդ ընդհարումը անուանում էին «ռուս-ճապոնական պատերազմ»…

Թուրքերի մի խումբ սկսեց արևմտեան կողմից շրջանակի պտոյտներ անել հայերի թաղը հարաւային կողմից պաշարելու համար։ Այդ նկատելով օֆիցեր Բեգիչևը զօրքին և հայ կռւող երիտասարդներին թուրքերի թաղից յետ կանչեց և կենտրոնացրեց հայոց թաղում նրան պաշտպանելու համար։

Գիւղի կենտրոնից թուրքերը, «եա Ալի» գոռալով, նորից ցած խուժեցին և գրաւեցին իրանց կորցրած թաղը։ Հրաձգութիւնը նորից սկսվեց կատաղի թափով։ Հարևան հայ գիւղերից օգնութեան հասան մի երկու զինված խմբեր։

Առաւօտեան ժամի 10-ին հրաձգութիւնը դադարեց։

Թուրքերի հարևան թաղը՝ ջարդված ու կողոպտված, այրվում էր, խանութներից և թէյարաններից բարձրացած գորշ և թանձր ծուխը հսկայական պտոյտներով բարձրանում էր վեր… Պարտութիւնը թուրքերի կողմն էր։

III

Կէսօրին Ջահուկ ժամանեց գնդապետ իշխան Վաչնաձէն եօթնասունի չափ կօզակներով։ Իշխանը գիւղը մտնելուն պէս գլխարկի շարժումներով սկսեց իր մօտ կանչել վերևում եղող թուրքերին գործի էութիւնը հասկանալու և հաշտութիւն գցելու համար, բայց, հակառակ իշխանի ջանքերին՝ թուրքերը պատասխանեցին նրան հրացանների պայթիւններով։

Գ. գնդապետը իսկոյն և եթ հրամայեց կօզակներին արևմտեան կողմից պաշարել գիւղը, իսկ ինքը առաջնորդելով տեղական զօրքերին և հայ կռւողներին, գիւղի միջով առաջ անցաւ։ Յարգելի իշխանը կարճ ժամանակամիջոցում խլեց թուրքերից նրանց երկու գլխաւոր դիրքերը՝ եկեղեցու բարձունքները և գիւղի կենտրոնում գտնվող հայոց հին գերեզմանատունը՝ վերջինիս վրայ նա կանգ առաւ և հաւաքելով իր շուրջը զինուորներին ու հայերին, թուրքերին ջարդելով դուրս քշեց գիւղից։

Թուրքերից ոմանք ցրվեցին հարևան բլուրները, ոմանք հարևան թուրքաբնակ գիւղերը, ոմանք էլ պահվեցին գիւղի վերևի թաղերում տների մէջ։ Հայերն սկսեցին թուրքերի տներից նորից իրանց կողոպտված կարողութիւնները դուրս քաշել, եկեղեցու անօթները դուրս բերեցին Աբաս Ջալ-օղլու տանից։

Իշխան Վաչնաձէն երկու երիտասարդ հայերի միջոցով հրամայեց դադարեցնել թալանը և հրկիզութիւնը։ Թալանի առաջն առնվեց, բայց հրդեհը ուժեղ քամու շնորհիւ լայն ծաւալ ստացաւ և տարածվեց բոլոր թաղերում։ Թուրքերի դիակները այլանդակօրէն փռված էին փողոցներում, նրանց մի մասը այրվեց տներում. լափող հրդեհի ժամանակ։ Երեկոյեան պահուն, հայերը և զօրքը թուրքերի թաղերից հայոց թաղը վերադառնալիս՝ մի դոմի մէջ թաքնված թուրքերի դաւաճան գնդակով զոհ գնաց յայտնի հերոս՝ Ասլանը։

Գիշերը թէ զօրքը և թէ հայերը հայոց թաղումն էին գտնվում։ Գիւղի ամենագեղեցիկ մասը հսկայական հրդեհով էր բռնված. գիշերը լոյսը երևում էր 20—30 վերստ տարածութեան վրայ։

IV

Հետևեալ օրը ժամի 30-ին արևածագին հրաձգութիւնը երկու կողմից նորից վերսկսվեց։ Այս անգամ կօզակները շրջապատեցին գիւղը արևելեան կողմից, իսկ զինուորները և հայերը նորից ամրացան հայոց հին գերեզմանատան վրայ. հրաձգութիւնը սաստկացաւ. թուրքերը նորից ջարդ կրեցին և ցրիւ եկան ու փախան, ով ուր կարողացաւ։ Երեկոյեան պահուն հրացան արձակելը խիստ արգելվեց։

Հայերից մեռան 3 հոգի՝ Ասլանը, Յարութիւն Պօղոսեանը և Հայրապետ Աւագեանը։ Թուրքերի կորուստը ճիշտ որոշված չէ. պրիստաւի և տանուտէրոջ ասելով սպանված են 250-ի չափ և վիրաւորված են 60—70-ի չափ թուրքեր։ Թուրքերի ասելով սպանված են 180-ի չափ և վիրաւորվել են 17-ի չափ թուրքեր, սակայն իրողութիւնն այն է, որ դեկտեմբերի 2—3-ին թուրքերը փողոցներից հաւաքել են և հողին յանձնել 96 դիակներ, բայց թէ որքան էլ այրվել են, մնացել են փլատակների տակ, ջրհորերն են նետվել և սար ու ձորերում կորել անհետ, դեռ յայտնի չէ։

Նախորդ օրվայ բռնկված հրդեհը բոցավառվում էր ճարճատելով անյագ հրէշի պէս լափում շէնքերը։ Աւելի քան 400 թուրքի տներ աւերված են և հրդեհված, ի թիւս որոնց և Աբաս Ջալալ-օղլու տները։ Թուրքերի բոլոր խանութները և թէյարանները հրդեհված են, կրակի ճարակ դարձան նաև 4 գլխաւոր մզկիթները և մի քանի հայի տներ և կողոպտված խանութներ։

V

Դեկտեմբերի 1-ին Ջահուկ ժամանեց Երևանեան գեներալ-նահանգապետ Եացկեվիչը։ Նախ քան նահանգապետի գալը թուրքերը գաղտագողի հրդեհեցին մի քանի դատարկ խանութներ, որպէս զի կարողանան այդ կերպով յանցանքը բարդել հայերի գլխին, բայց բռնվեցին իրանց գործած յանցանքի մէջ։

Գեներալ-նահանգապետը Ջահուկ ժամանելու պէս դիմաւորվեց հայերից աղ ու հացով և երկու գնդապետների և Նախիջևանի գաւառապետի հետ կառքով անցաւ գիւղը Ջահկի նոր աւերակները տեսնելու համար։ Գիւղում դիմաւորել էին նրան մի քանի ազդեցիկ թուրքեր, որոնք այդ աղետալի դէպքերի մէջ մեղաւոր էին գտնում հայերին, որպէս կռւի պատճառ եղողների, և որոնք նահանգապետին այն կարծիքն էին յայտնել, որ եթէ դրութիւնն այդպէս շարունակվի, նրանք կը գաղթեն Պարսկաստան։

Մի ժամից յետոյ պ. նահանգապետը մի քանի ազդեցիկ թուրքերի հետ թուրքերի թաղերից հայոց թաղը վերադարձաւ և կանգ առաւ դատարանի առաջ։

Յայտնի գործող Աբաս Ջալ-օղլու գլուխը թեթև վիրաւորվել էր, սակայն վէրքն անվնաս էր և խնամքով կապած։ Նա հարայ-հրոցով բռնեց գիւղի աչքի ընկնող Յովհաննէս Խանդեկալանեանի օձիքը և քաշ տալով նրան նահանգապետի առաջ, ասաց նրան.

—Գեներալը ողջ լինի, սա է մեր մէջ խռովութիւն գցողը. սա հայերի դաշնակի կօմիտէջան է, սրա արձակած գնդակով իմ գլուխը վիրաւորվեց, խնդրում եմ սրան կալանաւորեք և բանտ ուղարկէք։

Գեներալ-նահանգապետը ուշադրութիւն չը դարձրեց։

Գիւղի յայտնի հարուստ Քերբալա-Աբաս Բայրամօվը բռնեց Լևոն Էլիազեանի օձիքը և քաշ տալով նահանգապետի առաջ, ասաց նրան.

—Գեներալը ողջ լինի, սա ֆիդայի-բաշի է, սա էր ֆիդաների գլուխն անցել և կռւում մեզ, խնդրում եմ հէնց հիմա սրան կալանաւորեք։

Դարձեալ նահանգապետը ուշադրութիւն չը դարձրեց։

Թուրքերը, նկատելով, որ իզուր են այս կամ այն հային մատնացոյց անում, որպէս խռովարարների, թողեցին հայերի դէմ բողոքելը և խնդրեցին պ. նահանգապետից, որ նա իր կողմից միջոցներ ձեռք առնի շուտով հայերին և թուրքերին իրարից բաժանելու համար։ Նահանգապետը և բոլոր ներկայ եղողները հաւանութիւն տուին այդ բանին։

ժամի 3-ին նահանգապետը մեկնեց գիւղից։ Թուրքերը դադարեցին հայերին մեղադրել, շարունակ կրկնելով՝ «եթէ մենք չանէինք, նրանք էլ չէին անի։ Նահլաթ շէյթանին և մարդասպանին»։

Գեղունի

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՇՈՒՇՈՒՄ

Դեկտեմբերի 20-ին

Դեկտեմբերի 2-ի գիշերը մի նախերգանք էր, մի չարագուշակ անհրկութիւն ժողովրդի համար։ Ամբողջ քաղաքը ցնցվեց գնդակի ձայնից. մեծ ու փոքր դողահար անձկութեամբ մրմնջում էին. «ահա կոտորած»։ Գիշերը տարի անցաւ, քունը անհանգիստ՝ իբրև անուրջ։

Ի՞նչ էր պատահել։

Քաղաքից հարիւրաւոր թուրքեր գաղտ ճանապարհով իջել են Ղայբալուի ձորը և շրջապատել Ղայբալին։ Մի կողմից հրդեհ, միւս կողմից գնդակ.—քնաթաթախ ժողովուրդը՝ կին, երեխայ իրանց լաց ու կոծը խառնել էին ձորակի հրացանաձգութեան հետ, որի ձայնը բռնել էր և քաղաքը։

Գիւղը պաշտպանվեց։ Զոհեր քիչ եղան—3 հոգի։ Մի քանի մարագ այրվեցան։

Հայերը փոխարինեցին դրան—այրելով Խալֆալու գիւղի մի մասը։

Երեկոյեան ժամի 11 էր այդ։ Անհամար մարդիկ բարձրացել էին քերծի գլուխը և ականատես էին տեսարանին։ Օգնութեան գնացողներ եղան։ Իսկ Դովթալարից թուրքերը անթիւ գալպեր էին տալիս դէպի գնացողները, նոյն իսկ դէպի քաղաքի դիրքերը, դէպի հայերի թաղը։ Հայերը չէին պատասխանում նրանց կոչին, չէին ուզում նոր կոտորած։ Այդ տևում էր և [illegible]։ Բայց մենակ այդտեղ չէ։ Քաղաքի ներսում, Գովհար-աղայի տանից դարձեալ գալպեր դէպի հին-հանգստարանը։ Հայերը դարձեալ լուռ են, չեն պատասխանում։ Դրան էլ ականատես է զօրքի գլխաւորը՝ գնդապետ Իվանօվ։ Երկու պետերն էլ տեսնում էին, թէ ինչպէս թուրքերը ամբողջ գիշեր այս ու այն ծայրից գնդակ են արձակում, կոչ են անում կռւի, իսկ հայերը չեն ուզում։ Նրանք գովեցին հայերի համբերութիւնը։

Լուսացաւ։ Փառք Աստծու, երկիւղն անցաւ։ Թուրքերը լռեցին։

Ցերեկվայ ժամի 12 է։ Դարձեալ հրացանի խուլ որոտ։ Հետևում են ձայնին։ Գնում են կօզակներ։ Դէպի Քարինդակը նայող քերծի քարայրում թաքնվել են վեց թուրքեր և կրակում են գիւղի վրայ։ Կօզակները շրջապատեցին նրանց։ Երկուսը փախան, իսկ չորսին բռնեցին ու իրանց վեց մօսինների հետ բերին տուին ոստիկանապետին։ Դրանք քաղաքի թուրքեր չէին, այլ բէկերի գիւղական ռայեթներ։ Դրանց բանտարկութիւնը տևեց երեք օր և… ազատվեցին իրանց «արդիւնաւոր մօսիններով հանդերձ»։

Այրվեց Շուշիքենդի ձմերանոցը—Քերմէզ, որին փոխարինեց Մալիբէկլու գիւղը։ Մի քանի օրից յետոյ այդ ձմերանոցից Շուշիքենդ եկող երկու երեխայի իրանց 14 հատ բեռնած գրաստներով բռնեցին Մալիբէկլուի թուրքերը և անհետացրին։ Դրա փոխարէն հայերը խլեցին խալֆալուեցոց ապրանքը և մի քանի մարդ սպանեցին։

Փոխադարձ հրդեհ, փոխադարձ մահ։ Վերջ կը լինի՞ սրան։

Փոխադարձ և ճանապարհի կապվելը։ Հինգ ամիս է Եւլախի ճանապարհը թուրքերի ձեռին է։ Հինգ օր հայերը կտրեցին Ասկարանի կիրճը և թուրքերն սկսեցին ջրից հանած ձկան նման թրպրտալ։ Ո՞վ է մեղաւոր։ Իրանք սովորեցրին մեզ, իրանք կտրեցին մեր հացի ճամբան, մենք շատ խնդրեցինք ազատ անցուդարձ, շատ համբերեցինք՝ չեղաւ։ Եւ հայի համբերութիւնը հատաւ։ Դրանք կարծել են թէ մենք չը պիտի համարձակվենք իրանց ապտակին ապտակով պատասխանել։ Համարել են իրանց հայից շատ բաներ, ուժեղ և իրաւատէր և մեր համբերութիւնը նրանք ընդունել են թուլութեան և պարտութեան տեղ։ Բայց փորձը ցոյց տուաւ, որ կուլտուրական ազատ զարգացումը, անկիրթ հարևանի կողքին, առանց բռնի միջոցների դիմելու, անհնար է։ Եւ այսօրվան օրը մենք ստիպված ենք առաջ գնալ մեր նախագծած շաւղով, մի ձեռքում բռնած ինքնապաշտպանութեան զէնք և միւսում առաջադիմութեան խարազան։

Աղդամից եկած մի ռուս ստրաժնիկ պատմում էր, որ թուրքերը կազմակերպել են ձիաւորների մի խումբ. 1500 հոգուց բաղկացած, Ջաֆար-բէկի հրամանատարութեան տակ, և պէտք է ամսիս 9-ին յարձակվեին Խրամորթ, Խնապատ, Ղլիջբաղ, Բեաթուկ, Նախիջևանիկ, Փիրջամալ, Վարազաբոյն և Միրիշանլու գիւղերի վրայ՝ միաժամանակ ամեն մի գիւղին 150 ձիաւոր։ Բայց յանկարծակի փոխվող եղանակն ու սաստիկ բուքը արգելք եղան այդ մտադրութեան. և այժմ նրանք պատրաստվում են յարձակվել Ասկարանի վրայ և ցրվել հայերի պահակախումբը, դարձեալ Եւլախի ճանապարհն ամբողջովին իրանց ձեռքը գցելու նպատակով։ Մեր հարցին թէ՝ ինչպէս են վերաբերվում ձեր մեծերը թուրքերի այդ գիտաւորութիւններին, ստրաժնիկը զարմացած հարցնում էր՝—մի՞թէ չէք իմանում, որ մեր մեծերը գտնվում են թուրքերի կարգադրութեան տակ։ Ռուս աստիճանաւորների նախաձեռնած հաշտութիւնը դեռ գլուխ չի եկել։ Մենք կարծում էինք թէ՝ չինօվնիկները կառաջարկեն մի լուրջ, արմատական հաշտութիւն, բայց բանից դուրս եկաւ, որ նրանք ցանկանում են իրագործել միայն հայերի և թուրքերի առաջվայ նախագծած հաշտութեան պայմանները։ Այդ ևս դադարեց… որովհետև թուրքերը խոյս են տալիս և պնդում են այնպիսի մի կէտի վրայ, որի իրագործելը, իրանք էլ շատ լաւ գիտեն, որ մեզանից չէ կախված. Նրանք պահանջում են կենտրոնացում պետական և հասարակական զանազան հիմնարկութիւնների, որ մի և նոյն է թէ՝ չեն ուզում կոտորածի առաջն առնել։

Աղդամի թուրքերը տեղական պրիստաւի միջոցով հրաւիրում են հայերին Աղդամ իբր հաշտութեան։ Որքան անկեղծ առաջարկութիւն, որին միշտ կասկածով կարելի է վերաբերվել։ Դրա համար էլ հայերը ցոյց տուին նրանց Խանքենդին՝ իբրև յարմար կենտրոն հաշտութեան, ուր մանաւանդ զօրք լինելով երկիւղ չը կայ, բայց թուրքերը չը համաձայնվեցին։

Թուրքերը 44 փութօն ալիւր և ուրիշ մթերք բերին քաղաք, որին Ասկարանից բաց թողեցին հայերը այն պայմանով, որ կէսը տան հայերին, բայց չը տուին և մենք մի անգամ ևս խաբվեցինք դրանց ձեռին։

Քաղաքում դրութիւնն այնպէս լարված է, որ 15 օրից աւել է, որ ո՛չ հայ է գնում թուրքերի թաղը և ո՛չ թուրք հայերի մէջ, թէկուզ կօզակներով։ Ո՛ր և է բանակցութիւն կատարվում է ռուսների միջոցով…

Ծառայութիւնից հայրենիք վերադարձող 100 հատ հայ զինուորներին, որոնք ճանապարհվել էին Եւլախից Ֆլէյշէրի կարգադրութեամբ կօզակների հետ, Աղդամում թուրքերը երկու օր բանտարկած պահեցին առանց հացի և յետոյ բաց թողեցին։

Տիրում է կատարեալ սով. կենսական [illegible] մթերքների գները սաստիկ բարձրացան։

Այս գիշեր կռիւ սկսվեց Խանքենդում։ Ցերեկով շատ թուրքեր են գնացել այնտեղ։ Զօրանոց և կռիւ։ Անկասկած յարձակվողը թուրքն է։ Հետևանքը դեռ չիմացվեց. միայն երևում էր, և հրդեհ։

Առաւօտեան Խանքենդից եկած ստրաժնիկը այսպէս էր պատմում։—Քաղաքից և Ալիբէկլուից մօտ 100 ձիաւոր մտնում են Խանքենդի, օրվայ ժամը 2-ին այլ և այլ պատրուակներով։ Հայերը լուր են տալիս կօզակների գնդապետին, որը յայտնում է թէ՝ նրանք կռւի մարդիկ չեն և հրամայում է նրանց Խանքենդուց դուրս գնալ։ Գնում են։ Բայց աւանի ներքին թաղում, որ թուրքերի մասն է, կտրում են պատահած մի հայ կնոջ և երեխայի գլուխները և իրանք շրջապատում աւանը։ Լուրը տարածվելուց հայերը գրգռվում են և ուզում են սկսել, գնդապետը չէ թողնում և կօզակներ է ուղարկում թուրքերին հեռացնելու։ Կօզակները հասնում են այն ժամանակ, երբ թուրքերը ուզում են խուժել ներս։ Սկսվում է դիմադրութիւն։ Թուրքերից մի մասը, որ արդէն մտած է լինում, իրան ամրացնում է թուրքերի տներում, իսկ մի մասը, որ չի հասնում, մնում է դուրս։ Սկսվում է հրացանաձգութիւն թուրքերի և կօզակների մէջ։ Սպանվում են 2 կօզակ, 3 հայ և 30-ի չափ թուրք։ Կօզակները թալանում են թուրքերի խանութները։ Հրդեհվում է մի թուրքի տուն, բայց շուտ հանգցնում են։ Թուրքերը դեռ պաշարված մնում են տներում։ Կը ձերբակալե՞ն դրանց իբրև յանցաւորների թէ ոչ—հաւանական է, որ կարձակեն, ինչպէս միշտ։ Շուշուց շատ թուրք գնաց…

Տ.

ԴԷՊՔԵՐԸ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌՈՒՄ

Դեկտեմբերի 9-ին

Բաղա գիւղի սոսկալի աղէտի մասին ստացվել են նոր մանրամասնութիւններ։ Երբ թուրք ամբոխի ժխորը թափվել է գիւղը, աւերելով ամեն ինչ, ժողովուրդը թափվել է շրջակայ ձորերը, անտառները. փոքրամասնութեանն է աջողվել հասնել Զարդալու. մեծամասնութիւնը պատսպարվել է անտառներում։ Մինչև այժմ նրանց մասին ոչինչ չէր յայտնի. կարծվում էր, թէ անտառներում ու ձորերում պատսպարվողները կոտորվել են անխնայ, բայց բարեբախտաբար այդ չէ պատահել։ Ալլահեար-բէգ Զուլղադարօվը, նոյեմբերի 24-ին վերադառնալով Գանձակից կալուածները ու տեսնելով իր վաթանը, Բաղաբենդի սոսկալի աւերը, իր եղբայրների հետ միասին ընկել է շրջակայ անտառներն ու ձորերը ու ժողովել մօտ 1200 կին ու երեխայ, մեծ մասամբ մերկ, ցնցոտիներգեստ, մացառներից չանգռված ձեռքերով ու ոտներով, սովից, ցրտից ու սարսափից անչափ տանջված։ Այդ դժբախտներից 800 հոգու Ալլահեար-բէգը տարել է Ղազախի գաւառի Շամշադինի մհալի Ղուլաշու հայաբնակ գիւղը ու յանձնել տեղացիների խնամքին, իսկ մնացածներին տեղաւորել է իր տանը. մտադիր է նրանց էլ ուղարկել որ և է հայ գիւղ։ Այդ իմացանք Ալլահեարի մի նամակից, որը նա գրել է Գանձակի իր ծանօթներից մէկին։ Շատ սրտաճմլիկ պատկեր է նկարագրում իր նամակում Զագամի բէգը. ասում է, որ նա ամեն բան անում է դժբախտների վիճակը թեթևացնելու համար, նոյն իսկ հոգ է տանում սպանվածներին թաղելու և այդ նպատակով պահում է իր մօտ մի տէրտէրի («держу для этой цѣли у себя тертера…») Գրում է ի միխիթարութիւն մեր, որ սպանվածները շատ չեն ու ցաւակցութիւն է յայտնում տեղի ունեցած աղէտի առթիւ, աղէտ, որը բարոյական մեծ տանջանքներ է պատճառում բէգին։ Մի ուրիշ նամակից, հայի գրած, իմացանք նոյնը.—նամակագիր հայը խօսքեր չէ գտնում նկարագրելու ու գովաբանելու Ալլահեար-բէգի «մարդասիրութիւնը», նրա սրտագին վերաբերումը աղէտի զոհերին, նրա «հայրական» խնամքը խեղճերի մասին, որոնց վիճակը ամեն կերպ թեթևացնել է աշխատում՝ կերակրում է նրանց, հագուստ է տալիս, չէ թողնում թուրքերին նեղացնել նրանց ու աշխատում է մաս-մաս տեղաւորել նրանց այնպիսի հայ գիւղերում, որոնք հնարաւորութիւն ունեն պահել խեղճերին։ Հաւատում ենք Ալլահեարի ու հայ նամակագրի խօսքերին. պաշտպան տղամարդկանցից զրկված, մերկ, սոված, նոյեմբերի ցրտերին անտառներում պատսպարված, կծկված, չէին օջախներից, Ալլահեարներին հիւրասիրող, կերակրող օջախներից զրկված հարիւրաւոր կանանց ու մանուկներին գթութեամբ վերաբերվելը պատիւ է բերում ինտելիգենտ շրջաններում ու բարձրագիր սալոններում յաճախակի երևացող բէգին. շնորհակալ ենք նրանից… Բայց… եթէ [illegible] էլ, չենք կարող այս բայցը չասել, բայց… Ալլահեար-բէգին երբեք առիթ չէր ներկայանայ այդպիսի մարդասիրութիւն, այդպիսի գթութիւն ցոյց տալ դէպի աղէտի զոհերը, եթէ նա ընդդէմ լինէր այդպիսի աղէտների ծագման, եթէ նա գործ դնէր անկեղծաբար իր ազդեցութիւնը նրանց առաջն առնելու համար։ Ալլահեար-բէգ Զուլղադարօվը այնքան ազդեցիկ է Գանձակի, Ղազախի ու Գանձակի գաւառների թուրքերի մէջ, որ իր մատի մի շարժումով անգամ կարող էր կանգնեցնել նրանց, կարող էր զսպել, ոչնչացնել Գանձակի արիւնահեղութեան գլխաւոր հեղինակներ Ալեքպէկերներին ու Ալեաններին, կարող էր նոյնպէս վարվել Գետաբէկի դահիճների՝ Մուսէիբի ու թուրք տանուտէրների հետ, մի խօսքով նա իր ահագին ազդեցութեամբ կարող էր Թրքական խուլիգանութիւնը խեղդել իր սաղմի մէջ ու այդպիսով չը դարձնել դժոխք մի բազմամարդ քաղաք իր լայնածաւալ գաւառով, որտեղ մի տարի առաջ ոչ հայ, ոչ Թուրք երևակայել անգամ չէր կարող, թէ այժմս ստիպված կը լինի ապրել այսպիսի դժոխային պայմանների մէջ: Դրա համար շատ բան չէր պահանջվում յարգելի բէգից. հարկաւոր էր միայն համոզմունքով ընդդէմ լինել այն արհաւիրքներին, որոնցից այժմս տակն ու վրա է լինում մեր քաղաքն ու գաւառը... Պէտք է միամիտ երեխայ լինել հաւատալու համար այն բանին, որ Ալլահեար-բէգը անզօր է եղել դիմադրել խուլիգանական շարժման Թուրքերի մէջ. ոչ, նա մեծ ոյժ ունի անհնարին դարձնելու այդպիսի վայրագ շարժումը... Նոյեմբերի սկզբներում Գանձակում բէգերի պատահական մի համաժողով կար, որի մէջ փայլում էին Ղարաբաղի յայտնի տխրահռչակ հերոսները, որոնցից աչք էր ծակում ամենից շատ Մինքենդի հերոս Սադըխ-բէգը. Տակայշվիլին նրանց Ղարաբաղից «աքսորել» էր Գանձակ, «պատժել» էր նրանց այդպիսով. իսկապէս ուղարկել էր իբրև հմուտ, կոտորածների և կողոպտման շկօլա անցած մարդկանց, մշակելու Ալեապկարների ու Ալեասների հետ այն դժոխային ծրագիրը, որը այնպիսի վարպետութեամբ ի կատար ածվեց Նոյեմբերի 18-ին... Այդ համաժողովի ժամանակ Գանձակում երևում էր նաև Ալլահեարբէգը. հաւանական է, նա պատահում էր համաժողովի անդամների հետ ու գիտէր ինչ հարցեր են արծարծում նրանք... Եթէ ցանկանար, Ալլահեարը խարազանով կարող էր դէս ու դէն քշել համաժողովի յանցաւոր անդամներին. ոչ ոք նրանցից չէր յանդգնիլ նրա դէմ գնալ, նրան հակառակվել... Բայց նրա մէջ այդ ցանկութիւնը չը կար, ուստի հիմա զուր է աշխատում սրբել Բաղդալի կանանց և նահատակ մանուկների արցունքը...

Մեր բազմամարդ նահանգը արիւնով ներկող սոսկալի ողբերգութեան գլխաւոր ռեժիսօր, Գանձակի նախկին գեներալ-նահանգապետ Տակայշվիլին, այժմս, հաւանական է, անհոգ զուարճութեամբ է անցկացնում իր օրերը... Քանի որ չը կայ արդարադատութիւն, չը կայ յանցաւորներին պատժող անաչառ արդարադատ օրէնքը ու դահիճներին կատարեալ ազատութիւն է տված, մենք գեներալ Տակայշվիլու և նրա ռեժիսօրութեան տակ գործող բոլոր գիշատիչ մարդակերպ գազանների գլխներին ենք կանչում Գեատաբէկի ու Բաղդա գիւղի սրախողխող եղած, յոշոտված ու կենդանի այրված անմեղ գանուկների, նահատակված մանուկների բողոքը դէպի երկինք:

Ստ. Տէր-Աւետիքեան

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Դեկտեմբերի 18-ին

Մեզ մօտ պատսպարված մինքէնդցիների, խոզնավարցիների և հարարցիների վիճակը միանգամայն աննախանձելի է: Նախ, որ նրանք տեղաւորված են մեզ համար աւելորդ և բնակութեան անյարմար քարատակներում և խոնաւ տներում: Երկրորդ՝ ներկայ կզզխացած կեանքը, մեզ՝ ոչ Թալանի ենթարկվածներիս և սրից փախածներիս, որ այսքան նեղ է երևում, որչափ անտանելի կը լինի նրանց համար:

Ձմեռն է: Մեր գիւղացին պակաս վառելիքը իր այգու ծառերից կը լրացնէ, իսկ նրանք ո՞ր բաղից կամ ո՞ր անտառից կարող են փայտ բերել: Եւ այսպիսի անհրաժեշտ կարիքները թէեւլոց յետոյ, ի՞նչ անի դաղարկլեն ընկած հայը, ինչպէս նրանք իրանց անուանում են. ի՞նչ պատասխան կարող է տալ մրսող և հաց պահանջող երեխային:

Թերևս հնարաւոր լինի փոքրաթիւ ընտանիքի կարիքները հոգալը. իսկ երբ պաղ թոնրի շուրջը նստոտած են 10—12 անձինք, բոլորն էլ աշխատանքի անսովոր, ասացէք խնդրեմ, ո՞ւր և ո՞ր աւև կարող է նրանց տաքացնել:

Որոշ տեսակի ուտեստների մեծ պակասութիւն է զգացվում: Ամբողջ մի ամիս է, որ շաքարի երես չենք տեսնում, շաքարի տեղ գործածվող շաքարաւազը, մոնպասեն, և հասարակ կոնֆէտներն էլ հազիւ են ձեռք բերվում: Վերջին անգամ շաքարի գինը 60 կ. էր փութը.

Մի կողմից էլ լոյս է ընկել տարափոխիկ և վտանգաւոր հիւանդութիւն Սալու՝ Եծալըղ անունով: Վարակումը այն տներից է սկսվել, ուր ապրելիս են եղել մինքէնդցի հիւանդներ: Նախ, հիւանդը ամբողջ մարմնով թուլանում է և ապա գլխացաւ է սկսվում, որ հետզհետէ սաստկանալով շշմեցնում է և թառանցանքի մէջ է ձգում հիւանդին: Մահվան մի քանի դէպքեր են եղել: Քրտինքը օգնում է հիւանդութեան սկզբի օրերում:

Նորերս երևան եկաւ և երեխաների բկցաւ, քութէշ (скарлатина): Դէպքեր եղել են երեխաների մէջ: Երկու հիւանդութեան էլ ցուրտը վնասում է: Առողջապահական կանոնները այսպիսի օրերում կամայ-ակամայ մոռացութեան է տրւում և մարդ մեծ կարիքներ տեսնելով՝ իր առաջ դրված կեանքի բարեկեցութիւն տւող օրէնքները մի կողմ է նետում:

Սպասում և զգում ենք, թէ գարնան որպիսի արիւնոտ ապագայ ենք ունենալու մեր առաջ:

Սազանդարեան

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Նոյեմբերի 5-ին.

Մի քանի օր առաջ ես մի առ մի հերքեցի «Մշակ»-ի մէջ երևցած մի լուր, որով Ջան-բէգլարների պարագլուխ և ռուս կառավարութիւնից իր «քաջագործութիւնների» համար «прапорщикъ»-ի աստիճանով վարձատրված Կուրբան-էֆէնդին կամեցել էր իր հայ ազնուականների միջոցով տարածել ի լուր ամենեցուն, որ երբ թէ Կարսի հայերը, թւով 700 հոգի, յարձակում գործելով իր տան վրա և անվայելչութիւններ անելով՝ կամեցել էին սպանել նրան, բայց բարեբաղդաբար և, ուրախութիւն և ի ցնծութիւն տեղական իշխանութեան, այդ բանը չէ աջողվում. չէ աջողվում, որովհետև 700 հոգի հայեր անզօր են գտնվում մի յետընկած փողոցում մի Թուրքի սպանել, եթէ միայն ընդունենք աւազակապետի ցնդած ուղեղից բղխած յայտարարութիւնը հալած իւղի տեղ: Այդ Թրքական «խաղը» հայերի հետ նրա համար էր միայն, որպէս զի հայերին արգելք լինեն զինւորական նահանգապետից զէնք խնդրել ինքնապաշտպանութեան համար... Եւ Թուրք խուլիգանները մասամբ իր նպատակին հասաւ: Իշխանութիւնը մեծ պատուով ճանապարհ դրեց Կուրբան-էֆէնդուն դէպի Զարիշադի ու Շորագեալի կողմերը՝ իր ստանձնած «սրբազան» պաշտօնը մեծ աջողութեամբ կատարելու համար:

Այդ կէս-աջող և կէս-անաջող խաղից յետոյ մեր խելօք Թուրքերը դիմեցին մի այլ աւելի յանդուգն միջոցի—խաղի, այս անգամին համոզված լինելով, որ ռուս դիւրահաւատ ադմինիստրացիան հաւատ կընծայէ հայերին վերագրվող դէպքերին և «ուրիշ» միջոցների կը դիմէ նրանց «զսպելու» համար...

Անցեալ նոյեմբերի 28-ին, երեկոյեան դէմ, Կարսի ամենաբանուկ փողոցի վրա եղբ. Տէր-Մինասեանների գրավաճառանոցի մօտ, ատրճանակի երեք գնդակի հարուածով տեղն ու տեղը բաշանվում է ամենքի աչքերի առաջ պարսից փոխհիւպատոսի ծառայ՝ պարսկահպատակ երիտասարդ Գուլամ Ալի Դադաշ-օղլին, բոլորովին մի անմեղ և անչառ մարդ:

Եւ ահա այդ սպանութեան լուրը կայծակի արագութեամբ տարածվում է ժողովրդի բոլոր խաւերում և զանազան ենթադրութիւնների, անհիմն կասկածների տեղիք տալիս. ոմանք համարելով սպանութիւնը վրեժառութիւն իր հաւատակիցների կողմից, ոմանք հայերին վերագրելով: Պօլիցիան, ի հարկէ, խաւար ամբոխի աւտօրժակն ունենալով, միշտ վերջին կարծիքի—ենթադրութեան մէջ եղել է, և կը մնայ. մինչդեռ փաստը մնում է փաստ, որ ներկայ եղող վկաները տեսել են եղեռնագործին փախչելիս դէպի միւս փողոցում գտնվող պարսից հիւպատոսարանը, ուր և հաւանականաբար «բաստ» է մտել...

Սակայն տարածված անհիմն լուրերը ջրելու համար տեղական հայ յեղափոխական կոմիտէները յայտարարեցին թէ իրանք բոլորովին մաս չունեն այդ գազանային ոճրի մէջ, և մի նամակ էլ ուղղեցին նոյն մտքով պ. նահանգապետին, որը նամակ մատուցանողին բռնել տալով ուղարկում է ոստիկանատուն նրա ով և ինչ լինելը պարզելու... Քննութիւնից յետոյ—երբ չը կարողացան ոչ մի բան դուրս քաշել նրանից—արձակեցին:

Տեղացի

ՉԸ ՄՈՌԱՆԱՆՔ...

(Նամակ խմբագրութեան)

Մեր հասարակութեան ամբողջ ուշադրութիւնը գրաւված է ինքնապաշտպանութեան գաղափարով.—մեծ թէ փոքր, հարուստ թէ աղքատ սկսում է զինվել: Եւ սա շատ բնական է, մի կողմից 10 ամիս շարունակ մեր բարբարոս հարևան Թուրքերը ստիպում են զէնքը ձեռքից վար չդնել, ստիպում են մեր բազմապիսի անյետաձգելի կուլտուրական գործերը թողնել և զբաղվել պաշտպանողական դիրքեր բռնելով:

Սակայն հայ հասարակութեան գիտակից և բարեխիղճ մասի վրա ծանրանում է մի բարոյական մեծ պարտաւորութիւն, անյետաձգելի պարտաւորութիւն, որ կրում է զօրեղ այժմէութիւն: Դա մեր դառն, արիւնոտ իրականութեան զոհերն են—անպաշտպան ընտանիքներ, անհամար որբեր՝ բոկոտ ու քաղցած, ողբերգալի ծնողներ, ջահել-ջիւան ամուսիններ կորցրած՝ ջահել-ջիւան հարսներ, մի քանդված յարկի նախանձող նախկին փարթամ հարուստներ և այլն և այլն: Մի՞թէ կարելի է թողել ամբողջ 10 ամիս տևող արիւնալի տրագեդիայի հասցրած վիրաւորներին ու վնասները...

Եթէ խուլիգանները և պրովոկատօրները ներոնեան թունալի ժպիտով դիտում էին մեր զոհերին և լկտի կերպով զւարճանում, եթէ հրէշները անսահման հրճուանք են զգում, որ այսօր հայաբնակ գաւառները ներկայացնում են անմեղ արեան փոտակներ և դժոխային հրդեհներ—ապա մենք պիտի հաւաքենք մեր բոլոր ոյժերը և միաբան գործունէութեամբ մխիթարենք ու սփոփենք մեր տառապեալ եղբայրներին ու քոյրերին, հակայեղափոխութեան այդ առաջին և պարծելի կերպով ստանձված զոհերին...

Չը պիտի մոռանանք, դառնաշունչ ձմեռը հասել է արդէն, իսկ միւս կողմից քաղցը, սովն է սպառնում.—երկու պարծելի վիշապներ դէմ-յանդիման կանգնած են մեծ պրովոկացիայի զոհերի առաջ: Սպասելը ոճրագործութիւն է, հարկաւոր է ժամ առաջ փրկել սոսնց այն էլ անօրինակ թշուառներին ցրտից և քաղցից:

Տուրք սահմանենք՝—գրում էր ամիսներ առաջ պ. Լ. իր գեղեցիկ յօդուածներից մէկում.—այո, միայն բարեխիղճ, ամենքիս համար պարտադիր տուրքը կարող է քիչ թէ շատ փրկել ժամանակակից ներոնների, խուլիգանապետների անմեղ զոհերին, թէ չէ փայաս—փուլաս հաւաքելով, կոպէկներ հանգանակելով անթիւ աղետեալներին օգնելու պարտադիր գործը երբեք չենք կարող առաջ տանել:

Տուրք և միայն տուրք.—սա է միակ և ուղիղ ճանապարհը:

Չը մոռանանք...

Արշ. Յարութիւնեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Գանձակ, 9 դեկտեմբերի

Գանձակում կազմված աղքատախնամ յանձնաժողովը շնորհակալութեամբ ստանալով գանձակեցի—Թիֆլիսում վերաբնակվող պ. Նիկոլա Դանիէլեան Աֆանէսեանից, մի վագոն ալիւրի ստացագիր բարձած Թիֆլիսի կայարանից—ձրի բաժանելու համար այն բազմաթիւ չքաւորներին ու որբանոցներին, որոնց տան միակ աշխատող ձեռքը զոհ է գնացել Գանձակի Թրքական կոտորածին:

Կարիքն անսահման է և ամենագլխաւորն է ապրուստական, և պ. Աֆանէսեանը իր մարդասէր գործով անսահման բարիք է արել թէ Գանձակի թշուառացածներին ընդհանրապէս և թէ աղքատախնամ մասնաժողովին մասնաւորապէս, որը ի դէպ ասել՝ միջոցների սղութեան պատճառով, միանգամայն զրկված է ու անզօր բաւականութիւն տալու հարիւրաւոր թշուառների աղերսական պահանջներին: Աղքատախնամ յանձնաժողովի անդամները ի դիմաց Գանձակի հասարակութեան, ձեր թերթի միջոցաւ, յայտնում է պ. Աֆանէսեանին—նրա մարդասէր վարմունքի համար, իր անկեղծ շնորհակալութեան հաւատիքը:

Աղքատախնամ յանձնաժողովի նախագահ
Կորիւն վարդապետ
Քարտուղար Աւետիս Սահակեան

II

Շուշի, նոյեմբերի 24-ին:

Պարտք եմ համարում յայտնել, որ Շուշուց գեներալ Տակայշվիլու գովասանական հեռագրի տակ «Տէր-Սարգսեան» ստորագրվողը ես չեմ:

Մ. Տէր-Սարգսեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հայկական խմբի ներկայացումները, աղետների և յուզմունքների պատճառով, դադարեցին: Թիֆլիսի Դրամատիկական ընկերութիւնը տուել է դերասաններին երկու ամսվայ ռոճիկ և արձակեց խումբը:

Այսուհետև եթէ ներկայացումներ տեղի ունենան, նրանք կազմակերպված կը լինեն դերասանների կողմից, իբրև մասնաւոր ձեռնարկութիւններ:

Ռուսական դերասանական խումբը ցրվեց: Դերասանների մի մասը հեռացաւ Թիֆլիսից, իսկ մնացածը դիտաւորութիւն ունի մի ներկայացում տալու, որպէս զի ձեռք բերէ մի փոքր նիւթական միջոց անհրաժեշտ կարիքները ապահովելու համար:

Օպերային ներկայացումների կառավարիչ Դոնսկոյ հրաժարվեց իր պաշտօնից: Երգիչները և երգչուհիները որոշեցին իրանք հաւաքական ոյժերով առաջ տանել ներկայացումները: Նրանք նպատակայարմար գտան իջեցնել տեղերի գները և տալ յաճախ ցերեկվայ ներկայացումներ:

Հասարակութիւն գրաւելու նպատակով նրանք նոյնպէս բերին նաև օպերետներ: Մենք յիշատակել էինք արդէն «Գէյշա» օպերետայի մասին: Այնուհետև նրանք ներկայացրին «Նիտուշ» օպերետը, որ հաւանութիւն գտաւ հասարակութեան կողմից:

Չը նայելով քաղաքում տիրող անհանգիստ տրամադրութեան՝ օպերային ներկայացումներին հաւաքվում էր բաւական մեծ բազմութիւն: Երգիչները յոյս ունէին, որ նրանք կարող կը լինէին մի կերպ գլուխ հանել ներկայ ճգնաժամում և շարունակել իրանց ներկայացումները մինչև սեզօնի վերջը:

Սակայն գործադուլը վրա հասաւ, թատրոնի դռները փակվեցին և ներկայացումները դադարեցին:

Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսում՝ համառուսական գործադուլին արձագանք տալուց յետոյ՝ երբ բոլոր խանութները փակվեցին, երբ երկաթուղին դադարեց և այլն, հրատարակվեց պատերազմական դրութիւն և ժամանակաւոր գեներալ-նահանգապետ նշանակվեց փոխարքայի օգնական գեներալ Մալամա: Այդ պաշտօնը նա վարեց դեկտ. 12-ից մինչև դեկտ. 27-ը, ապա հրաժարվեց իր պաշտօնից և նոյն օրը նրա փոխարէն Թիֆլիս քաղաքի և գաւառի ժամանակաւոր գեներալ-նահանգապետ նշանակվեց գեն.-մայօր Ալիխանով-Աւարսկին: Նոր գեներալ-նահանգապետին «Մշակ»-ի ընթերցողները լաւ ճանաչում են արդէն Քութայիսից և մանաւանդ Հին-Նախիջևանից, ուր նա վարում էր նոյնպէս ժամանակաւոր գեն.-նահանգապետի պաշտօն:—

—

«Մշակ»-ի ներկայ համարում ընթերցողը կգտնի դեկտ. 22-ին Թիֆլիսի Սոլդատսկի-Բազարի մէջ անմտօրէն նետված ռումբի և նրան հետևող պարհուրանքների մանրամասնութիւնները: Պաշտօնական տեղեկութեան համեմատ սպանված և այրված դիակների թիւը 33 է, իսկ վիրաւորներինը-30 հոգի: Իսկ «Кав.»-ի լրատուն հաղորդում է, որ դեկտ. 22-ին Միքայէլեան հիւանդանոց են տարել 21 դիակ, իսկ քաղաքային բուժարանը 6 դիակ: 23-ին և 24-ին ոստիկանութիւնը գտել է 7 ածխացած դիակ ևս: Բացի դրանցից՝ ծանր վիրաւորներից 4 հոգի նոյն գիշերը մեռել են: Ուրեմն՝ սպանվածների և այրվածների ընդհանուր թիւը հասնում է 38-ի: Այդքանը դեռ յայտնիներն են, իսկ թէ դեռ այդ անաւէր շէնքի այրված փլատակների տակ որքան անմեղների դիակներ կան և կան վիրաւորներից դեռ քանիսն են մեռնելու կամ արդէն մեռել են—անհնար է ասել: Հասկանալի է, որ խանձված դիակները ճանաչելն անհնար է. անհնար է նաև ճանաչել վիրաւորներից շատերին, որովհետև դիակները չափազանց այլանդակված են: Որքան որ ճանաչվել են՝ վիրաւոր և սպանված հայերի թիւը մօտ 21 հոգի է: Գնահատել այդ հրէշաւոր գործի նիւթական վնասներն առ այժմ անհնար է. միայն այսքան կարելի է ասել, որ կրակի ու կողոպուտի զոհ գնացած բոլոր հաստատութիւնները կարող են հասնել հսկայական գումարի:

—

Երբ դեկտեմբերի. 12-ին Թիֆլիսում և Անդրկովկասի երկաթուղիների վրա գործադուլ հրատարակվեց, երկաթուղային գիծը ամբողջովին ընկաւ գործադուլաւորների ձեռքը: Նրանք կազմեցին մի ժամանակաւոր երկաթուղային վարչութիւն, որը մի թռուցիկ թերթով խոստանում էր հասցնել ազգաբնակութեան համար անհրաժեշտ հացը, նաւթը, վառելիքը, և այլն, խոստանում էր փոխադրել տուն վերադարձող պահեստի զինւորներին և այլն: Բայց գործադուլաւորների այդ նոր կառավարութիւնը երկար չը տևեց: Փոխարքայի հրամանով զօրքերն անմիջապէս բռնեցին բոլոր երկաթուղային գծերն ու կայարանները և դեկտեմբերի 15-ից հրատարակվեց գծերի վրա պատերազմական դրութիւն: Ժամանակաւոր գլխաւոր նշանակվեց գնդապետ Նէյգեբաուէրը և այնուհետև սկսեցին գնալ զուտ զինւորական գնացքներ բաւական անկանոն ձևով ու դանդաղ:

—

Երէկ, դեկտ. 30-ին Թիֆլիսում գործադուլը վերջ ստացաւ: Խանութները վաղուց արդէն բաց էին. բացվեցին արհեստանոցները, երկաթուղին, գործարանները և այլն: Էլէկտրական լոյսը նորից լուսաւորեց անտերն ու փողոցները: Տպարանները, որ բռնադատում էին մամուլին լռելու, վերջապէս սկսեցին գործել՝ վերջ տալով այն անմիտ ու յետադիմական բանին, որ կոչվում է մամուլի գործադուլ: Չէր գործում միայն էլէկտրաքարշը և հեռախօսը, որոնք պահանջում են բաւական խոշոր վերանորոգութիւններ: Պէտք է խոստովանվել, որ այս վերջին գործադուլն առհասարակ այնքան էլ աջող և արդիւնաւոր չէր, ինչպէս հոկտեմբերինը, իսկ հետևանքները... աւելի լաւ է առ այժմ լռել այդ արիւնալի ու ծանր հարցի մասին, թողնելով անաչառ ու անկեղծ կարծիքը մի այլ անգամի, երբ արդէն վերացած կը լինի Թիֆլիսից ճնշող պատերազմական դրութիւնը և կեանքը մտած կը լինի իր սովորական խաղաղ ուղին:

—

Անցեալ օրը Թիֆլիսի երկաթուղային զինւորական վարչութիւնը 50 դատարկ վագոն ուղարկեց Սանահին կայարանը փայտ հասցնելու քաղաքի աղքատ ազգաբնակութեանը այս ցուրտ ձմեռը, որի նմանը սակաւ է պատահում այստեղ:

—

Թիֆլիսում դեկտ. 20-ին յեղափոխական անարխիստների ձեռքով ծանրապէս վիրաւորված պրիստաւ Անիտկօն քաղաքային հիւանդանոցում մեռել է դեկտ. լոյս 28-ի գիշերը:

—

Անդրկովկասեան երկաթուղիների ժամանակաւոր գլխաւոր գնդապետ Նէյգեբաուէրը երկաթուղիների առանձին մասերի գլխաւորներին հետևեալ շրջաբերական հեռագիրն է ուղարկել՝ «Կովկասի Փոխարքայի կարգադրութիւնով ես ներկայ դեկտ. 24-ից նշանակված եմ Անդրկովկասի երկաթուղիների ժամանակաւոր կառավարիչ: Ստանձնելով այդ պաշտօնը, ես նպատակ եմ դրել լիակատար կարգը վերահաստատել ինձ յանձնված գծերի վրա, որպէս զի դրանով նպաստելով երկրի կանոնաւոր ու սովորական խաղաղ կեանքին վերադառնալուն՝ ցոյց տամ կառավարութեանը իմ կարողութեան չափով օժանդակութիւն՝ իրագործելու այն սկզբունքները, որոնք պարզված են հոկտ. 17-ի Բարձրագոյն մանիֆեստում: Այդ պատճառով առաջարկում եմ բոլոր բանւորներին և արհեստաւորներին սկսել աշխատանքները և ծառայութիւնները, իսկ ով որ չի ուզում հպատակվել իմ կոչին—հեռանալ իրանց պաշտօններից ու տեղերից: Դրա հետ միասին յայտարարում եմ, որ մինչև ներկայ դեկտ. 30-ի ցերեկվայ ժամը 12-ը չեկողները անյապաղ կարձակվեն պաշտօնից, իսկ գործադուլարների կողմից ամեն մի փորձ ճանապարհների վրա կարգը վերահաստատելու դէմ, կը խեղդվի զինված ուժով»:

—

Դեկտ. 29-ին Թիֆլիսի կայարանում կախված էր Անդրկովկասի երկաթուղիների ժամանակաւոր հրամանատար Նէյգեբաուէրի հետևեալ յայտարարութիւնը. «Սրանով յայտարարվում է, որ դեկտեմբերի 15-ից Անդրկովկասեան բոլոր երկաթուղիները պատերազմական դրութեան մէջ են յայտարարված, այդ պատճառով ամեն մի բռնութիւն և հակառակութիւն գնացքների կանոնաւոր ընթացքի դէմ, կը ճնշվի զինված ուժով:»

—

Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետ Ալիխանով-Աւարսկին ընդունում է իր գրասենեակում (Պետրոս-Մեծի փողոց—նախկին Լաբորատորնի՝ տուն Լալաեվի) պաշտօնական գործերի համար ամեն օր, ժամը 10—11-ը առաւօտեան, իսկ մասնաւոր մարդկանց ընդունում է երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը ցերեկվայ ժամը 1—3-ը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Պաշտօնական: Արտաքին գործերի մինիստրի հեռագիրը Անգլիայի ռուսական դեսպանի միջոցով նորին պայծառափայլութիւն Կովկասի փոխարքային, որ ստացված է ներկայ դեկտեմբերի 20-ին:

«Կոմս Լամզդորֆ յանձնարարեց ինձ հաղորդել ձեզ հետևեալ հեռագիրը: Կոմս Վիտտէն, ի նկատի ունենալով Կովկաս հասնող սուտ լուրերը, խնդրում է, ձեզ հաղորդել գործերի դրութեան մասին Ռուսաստանում: Պետերբուրգում բոլոր ժամանակը հանգիստ էր. յեղափոխականների ապստամբութեան փորձը Մոսկվայում կատարելապէս ճնշվեց անպէտ կորուստներով վերջինների համար և չնչին կորուստներով զօրքերի համար: Պօստ-հեռագրական գործադուլը դադարեց. երկաթուղիների մեծ մասը աշխատում է կանոնաւոր կերպով և առհասարակ յեղափոխական շարժումը պակասում է: Բէնկէնդորֆ:

—

Գեներալ-մայօր Շիրինկինի ստացած հեռագիրը Վլադիկավկազից 1905 թւի դեկտեմբերի 25-ից գեներալ Դանիլօվից:

Ռոստով կայարանը և Համքային Ջրերը զօրքերը վերցրին կռւով՝ զօրքերը գրաւեցին նոյնպէս բոլոր կայարանները Ռոստովից մինչև Բէսլան: Գործադուլի ղեկավարների մեծ մասը կալանաւորված են. տեղեկութիւններ չունեմ Պետրովսկից, Գրօզնիից, Բաքուից. գնացքները Ռոստովից թողված են. հեռագրական հաղորդակցութիւնը դեռ ևս չէ վերականգնված: Երկաթուղու վարչութիւնը սկսում է իր պարտաւորութիւնների կատարումը: Գործադուլ անողները կալանաւորեցին փոխգնդապետ Մարտօսին. փոխ-գնդապետ Շչէրբակօվի մասին դեռ ևս տեղեկութիւններ չունեմ. ժանդարմները բոլորն էլ իրանց տեղերումն են, ղեկավարում են ձերբակալութիւնները և փող ու զէնքեր խլել:

Ռուսական հեռագրական գործակալութիւն

11 դեկտեմբերի

Մոսկվա, 10 դեկտեմբերի: Դեկտեմբերի լոյս 10-ի գիշերը Ֆիդլէրի տան վրա, Լօբկօվսկի փողոցում, ուր լինելու էր միտինգ և հաւաքված էին երեք հարիւր մարդ մարտնչող դրուժինայից, սամօգիտեան գնդի վաշտ գրոհ տուեց: Պաշարվողները ռումբ գցեցին, որից սպանվեցին մի օֆիցէր և երկու զինւոր. այն ժամանակ ութ անգամ թնդանօթաձգութիւն եղաւ կարտէչով: Շատ կան վիրաւորներ և սպանվածներ:

Յաղթական դռների մօտ հինգ հազար հոգուց բաղկացած ամբոխը բարիկադ է շինում: Ապստամբների նշանաբանն է—ընդհանուր ուղղակի ձայնատուութիւն և սահմանադիր ժողով: Կազակները չեն գործածում նագայկաներ և զէնքեր:

Դեկտեմբերի լոյս 10-ի գիշերը Տվէրսկայա փողոցի վրա Յաղթական դռների մօտ բարրիկադներ էին սարքված հեռագրական սիւներից, քարից, դռներից և փեգկերից:

Գօրօդօվօյների խումբը հրացաններ էր կրակում Խոմեակովի տնից մարտնչող դրուժինայի վրա, իսկ Սադօվայա փողոցի վրա—սումեան դրագունները: Նոյնպիսի ընդհարում դրագունների հետ տեղի ունէր Միուսի վրա Սև տրասոնի վանքի մօտ: Սպանվածներ երկու կողմից ևս հաշւում են մինչև քսան: Վիրաւորների թիւը յայտնի չէ: Միմիայն մի կէտում նահանգական զէմստվօի վարչութեան մօտ բերված են փոխադրելու համար 21 հոգի: Ոստիկանութիւնը զինաթափ է անում յեղափոխականներին: Մոսկվայի ուրիշ մասերում նոյնպէս տեղի ունէին մասնաւոր հրացանաձգութիւններ մարտնչող դրուժինաների և դրագունների միջև: Կան սպանվածներ: Հիւանդանոցներում տասնեակներով վիրաւորներ կան: Տվէրսկայա փողոցում դրված են երկու թնդանօթ:

Առաւօտեան 6 ժամին, Ֆիդլէրի դպրոցում բռնված յեղափոխականները անձնատուր եղան վերջնականապէս: Կալանաւորված են 120 մարդ: Կան կանայք. խլված են 15 բրաունինգ, 18 վինտօվկա, շատ խանչալներ և 13 ռումբ: Անձնատուր լինելու առաջարկութեանը յեղափոխականները պատասխանում էին հրացանաձգութեամբ և երկու ռումբ արձակեցին, որոնցով սպանվեց սամօգիտեան գնդի մի օֆիցէր և վիրաւորվեցին երկու զինւոր: Առաջին թնդանօթաձգութիւնից յետոյ յեղափոխականները բարձրացրին սպիտակ դրօշակ, և հրաձգութիւնը թնդանօթներից և գնդաձիգներից կանգ առաւ, բայց յեղափոխականների միջև պառակտում առաջացաւ, և շինութիւնից կրկին սկսվեց հրաձգութիւն: Տասներկու թնդանօթային, գնդաձգային և հրացանային զարկերից յետոյ նրանք անձնատուր եղան: Յեղափոխականների միջև կան հինգ սպանվածներ և տասն և հինգ վիրաւորներ: Երբ զինւորները և քննիչները մտան շինութիւնը, տեսան ամեն տեղ բարրիկադներ, իսկ առանձին սենեակում—հիւանդանոց՝ վիրաւորներով, որոնց վէրքերը կապել էին յեղափոխականները: Կալանաւորներին ուժեղացրած պաշտպանութեամբ առանց միջնադէպքերի տարան բանտը: Ոստիկանութեան պահանջով, կալանաւորների անցնելու ճանապարհի վրա գտնվող բոլոր տները փակված էին 500 ր. տուգանքի սպառնալիքով: Այժմ Ֆիդլէրի տանը որոնում են զէնքեր: Տանտէրը վիրաւորված է և կալանաւորված: Կալանաւորված է նոյնպէս գործադուլ անող կօմիտէն: Ռումբերից ծակվել են պատերը մի քանի տեղերում: Հարևան բակերում, ուր նրանք իջնում էին չուանի սանդուղքներով, երեքին բռնեցին հարևան տան կեցողները և յանձնեցին ոստիկանութեան ձեռքը: Առաւօտեան երեք ժամին երկու ռումբ գցեցին «պաշտպանողական բաժանմունք» կոչված շինութեան վրա: Շինութիւնը վնասված է: Սպանված է մէկ ծառայող: Տվէրսկայա փողոցի վրա ամբողջ գիշերը շարունակվում էր հրացանաձգութիւն բարրիկադների ետևը պատսպարվածների և դրագունների միջև: Ասում են, որ կան սպանվածներ:

Այսօր կէսօրին Տվէրսկայա փողոցի վրա յեղափոխականները զինաթափ արին կառքով գնացող ոստիկանական օֆիցէրին: Դրագունները ցրեցին ամբոխը հրացանաձգութեամբ:

Իշխան Շչէրբատով կազմակերպում է ժողովրդական միլիցիա յեղափոխականների դէմ կռւելու համար:

Մասնաւոր բանկերը բացվեցին:

«Օխրաննօե-օտդելէնիէ» ասված շինութեան մէջ պայթիւնից աւերվեց առաջին պատը և վնասվեցին մի քանի բնակարաններ և սպանված են մի գօրօդօվօյ և մի զինւոր:

Քաղաքագլուխը ընդհատեց բանակցութիւնները գործադուլային կօմիտէի հետ, որը պահանջում էր, որ դրամ տալու հրամանները բոլոր վարչութիւնները ներկայացնեն կօմիտէին՝ հաստատելու համար: Կօմիտէն վարձեց բոլոր ծառայողներին վարչութեան մէջ:

Եարօսլավեան ճանապարհի վրա զանազան տեղերում բնակիչները կատաղութեամբ բողոքում են երկաթուղիական գործադուլի դէմ և սպառնում են քարուքանդ անել ճանապարհի վրա գտնվող երկաթուղիական շինութիւնները և ջարդել ծառայողներին: Եարօսլավլում մի այդպիսի բողոք յայտնեց տասն և մէկ հազար հոգուց բաղկացած ամբոխը, որին ցրեց ֆանագօրիական գունդը: Եարօսլավեան, Նիժեգօրօդեան և Կազանեան ճանապարհների վրա կողոպտում են վագոններ, մանաւանդ ուտելիքներով:

Դեկտեմբերի 10-ին ամբողջ կեանքը կանգ առաւ: Տվէրսկայա փողոցի վրա հասարակութեանը չեն թողնում երթևեկել, գազային լուսաւորութիւնը գործում է կիսով չափ: Տվէրսկայա փողոցում շարունակվում է հրացանաձգութիւն և ռէվօլվէրաձգութիւն: Երբեմն լսվում են տրաքոցներ և ուրիշ փողոցներում: Տվէրսկայա զաստավայի մօտ տեղի ունէր բանւորների մեծ միտինգ: Տարասեանյա հրապարակի և Յաղթական դռների միջև նորից բարրիկադներ են սարքված հեռագրական սիւներից: Զինւորները կրակում են: Լրագիրներ չեն ծախում: Ստրասոնի վանքի մօտ զանգակատան տակ դրված են գնդաձիգներ: Յեղափոխականները նորից կառուցանում են ռումբերից աւերվող բարրիկադները: Հիւանդանոցներում բազմաթիւ վիրաւորներ կան: Սպանված են մինչև տաս հոգի: Անցնող դրագունների վրա կրակում էին պատուհաններից: Ամբողջ օրը տեղի ունէր հրաձգութիւն գնդաձիգներից և թնդանօթներից:

ՄՕՍԿՎԱ, 11 դեկտեմբերի: Ցերեկվայ 1 ժամ 15 րոպէին 1000 մարդուց բաղկացած մարտնչող դրուժինան գնաց Կալուգեան դռներից կռւելու համար դէպի Պետրովկա և Ցվէտնոյ բուլվարը: Լուրերի համեմատ, քաղաքապետի մօտ գնացել են, որպէս խնդրատուներ, մի զինւորված երիտասարդ և մի կուրսիստուհի: Ասում են, որ նրանք ձերբակալված են: Յեղափոխականները յարձակվում էին գործում ոստիկանատների վրա: Բուտիրկիի վրա գտնվող ոստիկանական բաժինը և երկրորդ բաղօժինեան բաժինը վնասվեցին: Սուխարէվյա հրապարակի վրա յեղափոխականները յարձակվեցին խոհանոցը ուղեկցող պահակի վրա և խլեցին նրանցից զէնքերը: Տէատրալնյա հրապարակի վրա կանգնած են արտիլէրիան և հետևակ զօրքը: Կայսերական թատրոնները փակված են անորոշ ժամանակով: Գօրօդօվօյներին հրամայված է շրջել քաղաքացիական հագուստով: Այսօր գիշերը յեղափոխականները օդը թռցրին Տօրբէկ զէնքի խանութը «Միտրօպօլ» հիւրանոցի տան մէջ: Յեղափոխականները մտան մագազինը և վերցրին զէնքը: Կրակի հետ անզգոյշ վարվելուց փամփուշտների պաշարները պայթեցին. վեց յեղափոխականներ սպանվեցին կրակի մէջ, շատերը այրուածքներ ստացան: Եկած դրագունները ցրեցին ամբոխը հրացանաձգութեամբ: Կան սպանվածներ և վիրաւորներ: Սադօվայա փողոցի վրա Սուխարէվյա հրապարակից մինչև Կուդրին բարրիկադներ են, որոնք կառուցված են հեռագրական սիւներից, բուլվարների նստարաններից և չաւարտված շինութիւնների փայտերից: Կառապանները կանգ են առնում, արձակում են ձիերին, իսկ սահնակները գործ են ածվում բարրիկադների համար: Բարրիկադների դիմաց դրված են թնդանօթներ: Թնդանօթների որոտը խլացնում է ամբողջ քաղաքը: Ցվէտնոյ բուլվարի վրա նոյնպէս բարրիկադներ են սարքված: Յեղափոխականները սղոցում են ծառերը: Կառապանները երթևեկում են գիւղերով: Ցերեկվայ 4 ժամ 15 րոպէին Տվէրսկայա փողոցը մաքրվեց բարրիկադներից, որոնք հրդեհվեցին հրդեհաշէջների ձեռքով: Ընդհատված է երթևեկութիւնը Տվէրսկայա փողոցով: Մարտնչող դրուժինաները հրացաններ են արձակում զօրքերի վրա թաղերից, և ապա փախչում են: Զինւորները վերին աստիճան կատաղած են: Քաղաքի մի քանի մասերում վտանգաւոր է շրջել: Անընդհատ հրաձգութիւն է տեղի ունենում թնդանօթներից, գնդաձիգներից և հրացաններից: Գրգռմունքը յեղափոխականների դէմ աճում է:

ՄՕՍԿՎԱ, 22 դեկտեմբ.: Գեներալ նահանգապետը հրատարակեց Մոսկվայում երկաթուղիների վրա տեղի ունեցած դէպքերի տեսութիւնը ապստամբութիւնը ճնշելու և յեղափոխական օջախներից մաքրելու ընթացքի հետ միասին: Մայրերից ամենայամառ դիմադրութիւն ցոյց տուեց Մոսկվա-Կուրսկեան երկաթուղու Մոսկվա-երկրորդ կայարանի վրա, ուր գտնվում են Պրոխորովեան մանուֆակտուրան, Շմիտի կարասիքի գործարանը, որոնց բանւորներից էին կազմվում ապստամբների գլխաւոր զինւորված շարքերը: Կազանեան երկաթուղու Մոսկվա-Կոլօմնա գիծը, որով անդադար յեղափոխականները էին բերվում շրջականներից, մաքրված է և այնտեղ օրինական գործակալներ են դրված: Ապստամբների ոյժերը սպառված են և ցրված են: Ղեկավարների մեծամասնութիւնը ձերբակալված է, բայց ապստամբներին աջողվեց թաքցնել ընտրեալ պարագլուխներին: Հատ հատ յեղափոխականներ շարունակում են կռիւը, դաւաճանօրէն կրակելով զօրքերի վրա և բնակիչներին պահելով ճնշված և երկիւղալի դրութեան մէջ: Գեներալ-նահանգապետը հրաման արձակեց մինչև դեկտեմբերի 24-ը կատարելապէս մաքրել մայրաքաղաքի բոլոր թաղերը ապստամբների վերջին հետքերից, միաժամանակ զօրքերով շրջապատելով թաղերը և խուզարկութիւն կատարելով նրանց մէջ ոստիկանութեան ձեռքով և դուրս տանել բոլորը, ինչ որ ներկայացնում են ապստամբների վերջին հետքերը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ (Պաշտօնական): Հեռագիր Նորին Կայսեր. Մեծութեան անունով կոմս Վօրօնցօվ-Դաշկովից. «Թիֆլիս, դեկտեմբերի 4-ին: Ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձերդ Կայսերական Մեծութեան, որ նոյեմբերի 18-ին բոլորովին անսպասելի, տեղական իշխանութեան համար Գանձակում բռնկվեց հայ-Թուրքական կոտորած, որը սարսափելի բնաւորութիւն ստացաւ, շնորհով հարևան գիւղերից երկու ազգութիւնների կողմից քաղաք ներս խուժած զինված խմբերի: Իմ կողմից ուղարկվեց այնտեղ գեներալ Մալաման, որին յաջողվեց դադարեցնել կոտորածը և վերականգնել շատ թէ քիչ խաղաղասիրական յարաբերութիւններ, թէպէտ այդ յարաբերութիւնների ամրութեան համար երաշխաւորել չէ կարելի: Գանձակի ժամանակաւոր գեներալ-նահանգապետին հեռացնելով պաշտօնից՝ ուրիշին նշանակեցի: Գանձակի դէպքերի ազդեցութեան տակ Թիֆլիսի հասարակութեան վրա սարսափ տարածվեց: Նա սկսեց զինուել և կազմակերպեց ինքնապաշտպանութեան խմբեր, որոնք դուրս եկան փողոցները և գիշերները սկսում էին հսկել բոլոր անց ու դարձ անողների վրա իբրև թէ հարևան գիւղերից քաղաք ներս խուժող զինված Թուրքերին ձերբակալելու նպատակով: Այդ ինքնապաշտպանութեան կազմակերպութեան մասնակցում էին, բացի հայ յեղափոխական կուսակցութիւնից, նոյնպէս և բոլոր ազգութիւնների տանուտէրերը և վրացի յեղափոխական կուսակցութիւնները: Մի խօսքով, մօտաւոր հաշւով, փողոցներում երևան էին եկել մինչև 6,500 զինված անձինք, որոնց ուժով զինաթափ անելը անկարելի էր, որովհետև ոստիկանութիւնը գործադուլ էր արել, իսկ զօրքն էլ պաշտպանում էր քաղաքը գլխաւորապէս Բօրջոմի գաւառի կողմից շարժվող Թուրքերի զինված խմբերից, և որ զինաթափ անելու ձեռնարկութիւնը անխուսափելի կարող էր արիւնահեղ ընդհարում առաջացնել: Այդ միևնոյն ժամանակը, սկսած նոյեմբերի 22-ի գիշերվանից, քաղաքի ասիական մասում հայերի և Թուրքերի մէջ սարսափելի հրացանաձգութիւն տեղի ունէր, որի ժամանակ աւելի վնասվեցին Թուրքերը, շնորհով հայերի նպաստաւոր դիրքերի լեռան վրա: Զօրքին վիճակվեց լեռան վրայից հեռացնելու զինված հայերին: Այդ օրինակ հանգամանքներում, ի նկատի ունենալով խաղաղ ժողովրդի խնդիրը՝ կազմելու այնպիսի ինքնապաշտպանութիւն, որի ժամանակ բոլոր ինքնակամ զինվածները հեռանային փողոցներից մտնելով տները, և քաղաքի ասիական մասում անկարելի լինելով զօրքի միջոցով գործելու, որը կարող էր հրաձգութեան ենթարկվել, ես վճռեցի բանւորական կուսակցութեան յանձնել 500 հրացան, որը կոչված էր աջակցելու հայերի և Թուրքերի խաղաղացնելու գործին և որոնք կանգնեցին հրացաններով երկու թշնամացած ազգերի սահմաններում: Հետևող հանգամանքները ցոյց տուին այդ միջոցին նպատակայարմար լինելը: Երկու և կէս օր հայերի և Թուրքերի մէջ հրացանաձգութիւն չը կար, բայց յետոյ Թուրքերը չը համբերեցին և յարձակվեցին այդ պաշտպանութեան խմբի վրա: Վերջինս յետ նահանջեց իր առաջնակարգ դիրքերից՝ թողնելով սպանվածներ և վիրաւորներ և նրանց տեղը բռնեց զօրքը: Հետևեալ օրը քաղաքի ասիական մասում առաջացաւ հրդեհ, որը ոչնչացրեց մի քանի հայերի և Թուրքերի տներ: Խաղաղ բանւորական կուսակցութեան զէնք տալուց յետոյ, բոլոր մնացած ինքնակամ զինված կազմակերպութիւնները կամաց կամաց հեռացան փողոցներից: Դրա հետ միասին, բանւորական կուսակցութիւնը պարզեց, որ կոտորածը Թիֆլիսում առաջացրել են իրանք հայերը: Այդ պարզաբանութեան հետ համաձայնեցին առաջվանից միացած յեղափոխական կուսակցութիւնները, որոնք առաջ մեղադրում էին միաձայն ստորին ադմինիստրացիայի մարդկանց պրովոկատորութեան մէջ: Այժմ Թիֆլիսում արտաքին խաղաղութիւն է»:

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Զարուբաեվ նշանակվում է Պետերբուրգի զորքերի հրամանատար, իսկ Միշչենկօ նոյն պաշտօնով Մոսկվայում:

Պետերբուրգի քաղաքապետը ժամանակաւորապէս արգելեց քաղաքում և քաղաքի ծայրերում քաղաքական բնաւորութիւն ունեցող ամէն տեսակ հրապարակական և մասնաւոր ժողովներ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մեզ հաղորդում են հեղինակաւոր աղբիւրներից, որ ընդհանուր ընտրողական իրաւունքի և երկաստիճան ձայնատուութեան հարցը արդէն ստացել է իր սանկցիան: Վճռված է Դումայի գումարումը կայացնել փետրվարի 19-ին: Օրէց օր գործադուլը Պետերբուրգում շարունակում է երևան հանել իր կազմակերպութեան մեծ պակասութիւնները: Այդ գործադուլը աջողութիւն չունեցաւ և սկսում է քանդվել: Պառակտումը բանւորների միջև զարմանալի է: Աշխատել ցանկացողների կուսակցութիւնը զալում է ծայրայեղներին: Աւելի հաստատամիտ գործադուլ անողները չը կարողացան իրանց ազդեցութիւնը գործ դնել աշխատաւորների վրա: Դաշնակցութեան անդամների երևալը ուղեկցվում էր կալանաւորութիւններով: Աշխատողներից շատերը յայտնում էին գործադուլ անել հարկադրողներին, որ «այժմ ժամանակը չէ, շուտով տօներ են լինելու, մեր ընտանիքները սովամահ են լինում»:

Պետերբուրգի գաւառի երկաթուղիները չը միացան գործադուլին: Չը նայելով դաշնակցութեան շատ անդամներից շատերի յորդորներին Պետերբուրգի գաւառը շարունակում է աշխատել բնական կերպով: Նիկօլաեվեան երկաթուղու գնացքներով եկողները պատմում են, որ մեծ կայարաններից շատերում արգելում են երկաթուղիական ծառայողներին գործադուլ սարքել գիւղացիները, որոնք իրանք իրանց ձեռքով դատաստան են կատարում գործադուլ անողների վրա:

Ելեքտրական լուսաւորութիւնը վերականգնված է: Դեկտեմբերի 10-ին և 11-ին փակվեցին հիւրանոցների մեծ մասը օֆիցիանտների գործադուլի պատճառով: Շատ հիւրանոցներում, բացի օֆիցիանտներից, գործադուլ արին խոհարարները: Գործադուլը ժամանակաւոր բնաւորութիւն ունի: Քաղաքային ձեռնարկութիւնների, մագազինների և խանութների բանւորները չը միացան գործադուլին:

30 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 դեկտեմբերի: Կոմս Սօլսկու յանձնաժողովը կաւարտէ Պետական Խորհուրդը վերակազմելու հարցի քննութիւնը եկող շաբաթվայ վերջում: Այս օրերս լոյս կը տեսնի Բարձրագոյն ուկազ ագրարային անկարգութիւններից վնասված կալուածատէրերին վարձատրելու մասին: Վարձատրութիւնները կը տրվեն միայն ոչնչացրված կամ փչացրված տնտեսական ինվէնտարի համար:

ԿԻԵՒ, 17 դեկտեմբերի: Սենատոր Տուրաու հեռացրեց պաշտօնից դատի ենթարկելով Կիեվի ոստիկանապետ Ցիխոցկիին պրիստաւ Լեանչէնկովին: Սենատորը ճանապարհ ընկաւ Պետերբուրգ: Քաղաքում հանգստութիւն է: Դեկտեմբերի 18-ին քաղաքներում սկսված հրէական ջարդը հետևեալ օրը դադարեցված է:

ԼԻՎԵՐՊՈՒԼ, 28 դեկտեմբերի: Կէմբել Բաններման մի ճառ արտասանեց, որի մէջ անհիմն անուանեց Բալֆուրի մեղադրանքը որ իբր թէ ազատամիտները թուլացրին երկրի պաշտպանողական միջոցները, սակայն անգթութիւն է հերքել զինւորութիւնների կրճատման գաղափարը նրանց չափազանցութիւնը փոխադարձաբար խոստովանելու հողի վրա:

ԲԻԱՐԻՑ, 28 դեկտեմբերի: Կարմիր Խաչի այստեղի կօմիտէտը պատրաստակամութիւն յայտնեց անվարձ հիւրասիրութիւն ցոյց տալ 50 ռուս վիրաւոր օֆիցէրներին: Ֆրանսիական երկաթուղիները համաձայնվեցին այդ նպատակով պակասեցնել ճանապարհի վարձը 75%-ով: Առայժմ այդ առաջարկութիւնից օգտվեցին միայն 12 օֆիցէր, որոնք այսօր եկան այստեղ:

ՇԱՆՂՀԱՅ, 27 դեկտեմբերի (Ռէյտէր): Շանղհայում ապրող օտարազգիներին պաշտպանելու համար պատերազմական նաւերից ափ իջեցրած զօրքերը հեռացրված են: Կեանքը քաղաքում նորից ընդունեց բնական բնաւորութիւն:

ՊԼՕՑԿ, 28 դեկտեմբերի: Պրիվիսլեան երկաթուղիները յայտարարված են արտակարգ պաշտպանութեան դրութեան մէջ:

ՕԴԵՍՍԱ, 28 դեկտեմբերի: Ստացված տեղեկութիւնների համեմատ, լէյտենանտ Շմիդտի գործը միացած է ընդհանուր օչակովեան դատի հետ: Դատի են ենթարկվում «Օչակով» կրէյսերի 260 նաւաստիներ և 8 ուրիշ անձինք: Գործի ունկնդրութիւնը լինելու է Կէրչում, ուր ահագին շինութիւն կայ: Շմիդտի որդին, ռէալական դպրոցի աշակերտը, որը բռնված է «Օչակովում» և, որը նստած էր հօր հետ կազեմատներում, ազատված է դատից և կը յանձնվի ազգականների հոգատարութեանը: Շմիդտի քրոջը թոյլատրված է տեսակցել եղբօր հետ:

ՌԻԳԱ, 28 դեկտեմբերի: Անցեալ գիշերը Գօսպիտալնի փողոցի վրա երեք տներից գնդակահարեցին Վեազէմեան գնդի անցնող բատալիօնը, որը պատասխանեց կրակով: Տները շրջապատված են: Խուզարկված են և կալանաւորված տասներեք մարդ. բռնված է զէնք: Դրանից առաջ կողքին տեղի ունեցաւ յարձակում զօրանոցի պահապանի վրա: Կանչված զինւորները վիրաւորեցին մի յարձակվողին և բռնեցին նրան: Լատիշ յեղափոխականները գաւառում կարել են դրամի նման նշաններ, որոնց վրա կան ապստամբների մի պարագլխի մակագրութիւնները և պատկերները:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ, 27 դեկտեմբերի: Տէրսկի շրջանում և Վլադիկավկազ քաղաքում յայտարարված է պատերազմական դրութիւն: Քաղաքում հանգիստ է: Երթևեկութիւնը երկաթուղու վրա վերականգնված է:

ՌՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ: Դեկտեմբերի 28-ին: Տօները հանգիստ անցան. այսօր բոլոր առևտրական տները և բանկերը բացվեցին. կեանքը աւելի բնական ընթացք է ստանում. անկարգութիւնները վերջնականապէս ճնշված են համարվում: Խուզարկութիւնները գլխաւորապէս զէնք խլելու համար, նոյնպէս կալանաւորութիւնները շարունակվում են. երկաթուղիական երթևեկութիւնը վերականգնվում է:

ՆՕՎՕՐՕՍԻՅՍԿ, դեկտեմբերի 28-ին: Նօվօրօսիյսկում և նրա գաւառներում մտցնելով զինւորական դրութիւն, քաղաքը ազատվեց յեղափոխականների ազդեցութիւնից, որոնց ազդեցութեան տակ գտնվում էր դեկտեմբերի 8-ից: Կոզակների պահակները բնակիչներից խլում են զէնքը: Յեղափոխականներին խուզարկում են և բանտարկում են: Զինւորների հետ ընդհարումներ չեն եղել: Գեներալ-նահանգապետ Պրժեվալսկու կարգադրութեամբ պաշտօնից հեռացված է քաղաքագլուխ Նիկուլին: Կարգապահութիւնը քաղաքում բոլոր ժամանակը չէ խանգարվել:

ՄՕՆՏԼԻՕՆԷ (Կալաբրիա) դեկտեմբերի 28-ին: Այսօր երեկոյեան 9 ժամ 54 րոպէին երկրի սաստիկ տատանում էր զգացվում. քաղաքում ընդհանուր իրարանցում է տիրում: Վնաս չէ հասցրված:

ԼՕՆԴՕՆ, դեկտեմբերի 28-ին: Նախընտրական ագիտացիան սաստիկ տարածված է: Բոլոր աչքի ընկնող քաղաքական գործիչները ճանապարհորդում են երկրում, ճառեր արտասանում: Կէմպբել Բաններմանը խօսում էր Լիվերպուլի, Ջեստերի, Բէկսգէմի, Շրիուսբուրգի ժողովներում, գնում է Գլազգօ և Շօտլանդիա: Գանձարանի կանցլեր Ասկվիտը արտասանեց մի շարք ճառեր Իօրկշիրում. Ջէմբերլէնը ագիտացիա է անում երկրի միջին մասում, Բալֆուրը Մանչեստրում: Այդ քաղաքում քաղաքական խիստ լարված դրութիւն է տիրում: Ժողովները անհանգիստ են անցնում: Ճառախօսները յաճախ ընդհատվում են: Ընտրութիւնների առաջին հետևանքները, որոնք բնորոշում են դրութիւնը, յայտնի կը դառնան շաբաթ գիշեր: Ընտրութիւնների մեծ մասը կը կայանայ հետևեալ շաբաթ:

ԼՕՆԴՕՆ, դեկտ. 28-ին, Զինւորական մինիստրը ասաց Դամբարում, որ ազատամիտ կուսակցութիւնը կատարելապէս ցանկանալով խաղաղութիւն պէտք է ձեռք առնէ նախազգուշութեան միջոցները և նաւատորմի զօրքի պատերազմական պատրաստութիւնը պահէ, մինչև կը գայ ժամանակ, երբ ժողովուրդը կը համոզվի ահագին զինւորութիւնների անմտութեան մէջ:

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ, դեկտ. 27-ին: Այսօր վերականգնած է կանօնաւոր երթևեկութիւն Մինէրալօվօդեան ճանապարհի վրա, որը ընդհատված էր դեկտեմբերի 9-ից:

ՕՊԱՏՕՎ, դեկտեմբերի 27-ին: Օստրովցում զինւորների հետ ընդհարում տեղի ունեցաւ: Հրացանաձգութիւնը շարունակվում էր երեկոյեան 4-ից մինչև 5 ժամը: Սպանվածներ և վիրաւորված շատ կան: Զօրքի կողմից ոչ ոք չի վնասված: Ուսօվ աւանում զինված չարամիտների ձեռքով աւերված են գմինային վարչութիւնը, գմինային դատարանը, թէյի հոգաբարձութիւնը: Գործերը, գրքերը, սարք ու կարգը, գմինայի կասսան ոչնչացրած են:

ՏՕԿԻՕ, դեկտեմբերի 27-ին: (Ռէյտէր) Եապօնիան շուտով բաց կը թողնի 215,000,000 դոլլարի ներքին օբլիգացիաներ, պատերազմի ծախքերը ծածկելու համար: Դրանցից 75,000,000 դոլլար կը լինի որպէս վարձատրութիւն պատերազմի ժամանակ արած ծառայութիւնների համար:

ԲԵՐԼԻՆ, դեկտ. 28-ին: Երեկվայ պաշտօնական բիւլետէնը հաղորդում է, որ պետական քարտուղար Ռիխտհօֆէնը կաթուածահար եղաւ: Հիւանդութեան ելքի երկիւղը շատ լուրջ է:

ԽԱՐԿՕՎ, դեկտեմբերի 28-ին: Ալէքսանդրեւեան արհեստանոցները Կուրսկօ-Խարկօվսկօ-Սեվաստօպոլսկու ճանապարհների փակված են: Այդ արհեստանոցների և Լօզօվայա կայարանի ճանապարհի բանւորներին տրվում է վարձ:

ԲԱԽՄՈՒՏ, դեկտեմբ. 28-ին: Ստացված տեղեկութիւնների համաձայն տօն օրերը Բախմուտի շրջակայքի բոլոր գործարաններում և հանքերում հանգիստ անցան: Բանտարկութիւնները շարունակվում են:

ԼԻԲԱՎԱ, դեկտեմբ. 28-ին: Վերջին ժամանակները Լիբավայում սկսվեց նախընտրողական ագիտացիա պետական դումայի: Վաղը բօրսայի շինութեան մէջ նշանակված է տեղական հրէաների ժողով, որոնք իրաւունք ունեն մասնակցելու:

ՎԱՐՇԱՎԱ, դեկտեմբ. 27-ին: Լիւբլինի տակի կամուրջը կարգի բերելուց յետոյ Կովելսկի մասի վրա երթևեկութիւնը վերականգնված է: Կոմիսսիայի անդամների միջնորդութիւնը զինւորական դրութիւնը վերացնելու մասին, մինչև Պետական Դումայի համար ընտրութիւնները, գեներալ-նահանգապետի կողմից հանդիպեցին հետևեալ պատասխանի, որ այդ բանը մտցրված է խաղաղ ազգաբնակութեան ապահովութիւնը երաշխաւորելու համար և յեղափոխական կուսակցութիւնների դէմ կռվելու համար, որոնք ձգտում են չը թոյլ տալ Պետական Դումայի գումարումը, այդ պատճառով նա կարող է վերացնել միայն հանգստութիւնը վերականգնելուց յետոյ, մի բան որ կազմում է խաղաղ բնակիչների անկեղծ ցանկութիւնը, որոնց թվին պատկանում են նոյնպէս յանձնաժողովի անդամները:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
ՋԻԿՕՎՍԿԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային
Զ. Ի. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳՁԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐՆ-ԲԺԻՇԿ ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ց. ԳՈՒՐԴԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.:
Խ. Թ. ԱԲԵԼԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Գ. Ա. ԱՐԴԱԶԻԱՆԻ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօլօգիական հետազօտութիւններ:
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով:
Ելիզավէտինսկայա փողոց, 101, տէլէֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր:
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին հ. և ելեկտրօ-բուժութիւն:
Գ. Ն. ԴԵՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼԶԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի:
Գ. Ա. ԲԷՑԷՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.: Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նօմէրներից:
(Հ. ռ. կ.) 25—100

ԲԺԻՇԿ
Տ. Խախանեան
Ներքին, երեխայոց և վեներակ. հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը:
Վելեամինօվսկայա փողոց № 22, Նատեխկօվի տանը: (Ե. Հ. Կ.) 1—3

Թիֆլիսի ծառայողական
բանւորական միութեան բիւրօն գտնվում է Միքայէլեան փողոցի վրա, գերմանական այգում, որտեղ գրվում են նոր անդամներ և ընդունվում է անդամավճարը: Վարձել ցանկացողները կարող են դիմել բիւրօին, նմանապէս անտեղ մնացած ծառաները, խոհարարները պէտք է դիմել տեղի համար այս բիւրօում առաւօտեան 9-12 ժամ. և երեկոյեան 6-8 ժամ:
Թիֆլիսի ծառայողների բանւորական միութեան բիւրօ.
1—1

Լոյս տեսան և վաճառվում են ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
ԾՈՑԻ և ՊԱՏԻ 1906 Թ.
„ՇԻՐԱԿ“
Պատկերազարդ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
(Ութերորդ տարի)
համառօտ բովանդակութիւնը
ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է վաճառականական, բժշկական, առողջապահական, բնագիտական, գիտական, կաթնատնտեսական, մեղուաբուծական, տնտեսական, ճանապարհորդական, բանասիրական, կենսագրական, գիւղատնտեսական, բանաստեղծական—ազգային քնար, պատմական—Այծեմնիկ՝ հայ հերոսուհու յաղթանակը Անիում, Լեզու կարող՝ ճշգրիտ անցք, Ո՞վ էր Վարդան Մամիկոնեանը և այլ տեղեկութիւններ: Վիճակագրութիւն հայերի—Թիւրքիայում, Պարսկաստանում և Ռուսաստանում, գլխաւոր բնակավայրերը (հայ-թրքական կոտորածների առթով): Զուարճալիք, բերումներ, խնդիրներ, հանելուկներ, վիճակներ:
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է ընտիր մտքեր և աֆօրիզմներ, եկեղեցական և ազգային տօների բացատրութիւններ, հայոց հեթանոսական սովորութիւններ, թռչնապահական, մեղուաբուծական, անասնապահական, բժշկական, առողջապահական տեղեկութիւններ. խորհրդածութիւններ հեղինակաւոր անձանց: Ազգային քնար—բանաստեղծութիւններ. հայկական կեանքից և հայոց պատմութիւնից նշանաւոր դէպքեր—Թաթարների արշաւանքը. տնտեսական, արհեստագիտական խորհուրդներ, հետաքրքիր նորութիւններ, պատմական ժամանակագրութիւն, կենսագրութիւններ, նոր անեկդոտներ, առածներ, հանելուկներ, ժողովրդական-ազգային երգեր, լէյլեներ: արկածալից և հերոսական դէպքեր Զէյթունցիների և Սասունցիների կեանքից: Տեղեկութիւններ մանկական վարդապետութեան մասին:
Իւրաքանչիւր օր, առաջին երեսների վրա տպագրված է միմի բանաստեղծական կտոր, համարեա բոլոր հայ բանաստեղծներից, որոնք արտայայտում են նրանց հայեացքը դէպի ազգն ու հայրենիքը:
ՏԱԽՏԱԿԸ ներկայացնում է Արագածը, Շիրակի դաշտը հայ գուսթանութիւններով, Անիի աւերակների առաջ նստած հայ կինը հովուի սրնգի նուագի տակ փնտրում է իր հայրենիքի անցեալ փառքերը: Նկարը զանազանագոյն է և կարող է սենեակի զարդ ծառայել:
ՊՐԷՄԻԱՆ միացրած է ծոցի օրացոյցի յաւելուածին մօտ 60 երես—«Վերածնութիւն Հայաստանի», հայերի մատուցած ծառայութիւնը ռուսներին Կովկասի տիրապետութեան ժամանակ, խոստումներ և յոյսեր Հայաստանի անկախութեան և այլն և այլն:
«Շիրակ» օրացոյցները զարդարված են մի շարք գունաւոր պատկերներով:
Գները՝ ծոցինը—20 կոպ., պատինը—50 կոպ.: Գումարով գնողներին լինում է մեծ չափով զեղչ:
Դիմել՝ Александрополь, типографія „Ширакъ“ Карапету Апинянъ.—արտասահմանից—Alexandrople, Karapet Apinian (Caucase).
Աւելի մանրամասն բովանդակութիւնը առանձին թերթով տպագրված ցանկացողները կարող են ձրի ստանալ:
10—10
Կարապետ Ափինեան

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպեկտի և Կաղնոտսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կաղնոտսկի փողոցից № 2, (ա. օ.) 66—300

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ
ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միհայել Գեդեվանովի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում: Սեփական տ., տէլէֆօն № 791: (ա. օ.) 42—150

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը: 35—100

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիսի, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկևիչյա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն): (ա.օ.) 30—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8: (ե.ո.) 31—100

ՏՊԱԳՐՈՒՄ ԵՆՔ
ԱՅՑԵՏՈՄՍԵՐ և ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՆՐ ԳՈՐԾԵՐ
Վաճառվում են մեծադիր և բաց-նամակ պատկերներ:
Դիմել՝ фото-цинкогр. С. Согомоняна, Базарная, 22. Тифлисъ. (Հ. Կ. Ե.) 3—3

ԲԺԻՇԿ
Բ. Ա. ՊԱՊՕՎԵԱՆ
Մասնագէտ—քթի, կոկորդի և ականջի: Ընդունում է հիւանդներին—առաւ. 10—12½ ժ. երեկ. 5—7 ժ.
Հասցէն. Միքայէլեան փողոց տ. Զօրբերի № 157. 10—10

ԲԺ. Ն. ԵԱՐԱՄԻՇԵԱՆ
Ներքին, մանուկների, կաշուի և վեներական հիւանդութիւնների համար:
Ընդունում է ամեն օր առաւօտեան 9—12 ժ. երեկոյեան 5—7 ժ.
հասցէ—Աբասաբադեան հրապարակ № 9, մուտքը Շէյխօֆեիևեան փողոցից № 1: (եր.հ.կ.) 15—20

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով):

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երեւանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 1[illegible] ր. գիշ.
Ալեքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալեքսանդրօպոլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր. գիշ.
Երեւան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1906 թ.
„ՄՈՒՐՃ“
ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
(Նոր շրջան VI տարի)
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ
Ռուսաստան եւ Պարսկաստան—տարեկան 10 ր., կէս տարին 6 ր., 1 ամսվան 1 րուբլի:
Արտասահման—տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր., (18 ֆ.), 1 ամսվան 1 ր. 20 կ. (3½ ֆ.):
Ծանօթութիւն. Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս. սկզբում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.—կամ սկզբում 5 ր. և յունիսի 1-ին 5 րուբլի: Հայոց դպր. վարժուհիների և ուսուցիչների, գիւղական քահանաների, միջն. ուս. աշակերտների և ուսանողների համար բաժանորդագինն է 8 րուբլի Ռուսաստանում: Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագինը (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանելով այնպէս, ինչպէս իրանց յարմար է:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է
Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց տ. № 12):
Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել Тифлисъ, Въ редакцію журнала „Мурчъ“. Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Murtch».
«Մուրճի» գործակալներ.
Աստրախան—Գ. ք. Մկրտումեան:
Բագու—բժ. Գ. Սարգսեան, (Б. Морск. д. № 26) և Յ. Քոչարեան:
Բերդ-Էյրաթ—պ. Դ. Տէր-Դանիէլեան:
Երեւան—«Արարատ» գրախանութ.
Կարս—պ. Համզասպ Տ.-Խաչատրեան:
Մոսկվա—պ. Ստ. Թումեան.
Սօչի—պ. Արամ Յակոբեան (Սեծովեզերեայ շրջան):
Սամարկանդ—Ռ. ք. Բէկգիւլեան (Անդրկասպեան երկիր):
Թիֆլիս—«Գուտտենբերգ» և «Կենտրօնական» գրավաճառ.
Վլադիկաւկազ—Յ. ք. Սաւիկեան (Հիւս. Կովկասի համար):
Թաւրիզ—Բժ. պ. Յ. Տէր-Ստեփանեան և Հ. Պանիրեան:
Եգիպտոս—դօկտոր Կ. Փաշայեան-Խան (Աղեքսանդրիա):
Էնզելի—պ. Գ. Մելիք-Աբրահամեան:
Նոր-Ջուղա—պ. Տիգրան Աբգարեան:
Թեհրան—պ.պ. Ալէքսան Թումեանց և Լ. Բաբայեան:
1905 թւականի այն բաժանորդները, որոնք կը գրվեն մինչև այս տարվայ դեկտեմբերի 1-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը (10 ր.) միանուագ՝ կը ստանան, իբրև պրեմիա, պ. Առանձարի «ՎՇՏԻ ԾԻԾԱՂԸ»: Նոր գրվող բաժանորդները այդ պրեմիայի փոխարէն, կարող են ստանալ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների «Մուրճ» ձրիաբար:
5—5

ԴԵՊՕ
ԱՌԱՋԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„Եղբ. Յակոբջանեան եւ Սարգսեանց“
Պատրաստի հագուստեղէնի խանութում (Միքայէլեան կամուրջ, Քամոյեան տուն № 25—30) մշտական ստացվում են մեծ քանակութեամբ կանանց, տղամարդկանց և երեխաների համար ամենավերջի ամառվայ սեզօնի տարազով պատրաստած հագուստներ:
Գները չափաւոր են և առանց սակարկութեամբ: (չ. հ.) 82—100

1896
ԾԱՂԻԿՆԵՐԻ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆ
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԿՕՆ.
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ամեն մրցութիւնից բարձր:
4—12 (ա. 20)

1866. Մոսկվա, 1870. Ս.-Պետեր., 1882. Մոսկվա 1896. Նիժնի-Նովգ.
(GRAND-PRIX)
ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԵԱՆ
С.-ПЕТЕР-БУРГЪ
„1860“
ԹԻՖԼԻՍՈՒՄ
76—80

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.